ԱՄԵՆԱՄՍՅԱ ՏԵՂԵԿԱԳԻՐ՝ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

BADASYAN CONSULTING

ՄԱՐՏ 2026

ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև «Հայաստանի ջրի և ոռոգման ծառայությունների բարելավման ծրագիր. 1-ին փուլ» վարկային համաձայնագիրը վավերացնելու մասին ՀՕ-54-Ն (ընդունված՝ 04.03.2026 թ., ուժի մեջ՝ 10.03.2026թ.)

- «Հայաստանի ջրի և ոռոգման ծառայությունների բարելավման ծրագրի» առաջին փուլի իրականացման նպատակով ՀՀ-ն վավերացնում է վարկային նոր համաձայնագիր, որի շրջանակներում Վերակառուցման և զարգացման միջազգային բանկը (Համաշխարհային բանկ) տրամադրելու է 70.4 միլիոն եվրո վարկ: Այս նախաձեռնությունը, որը նաև համաֆինանսավորվելու է Զարգացման ֆրանսիական գործակալության կողմից, հանդիսանում է նախկինում իրականացված բարեփոխումների տրամաբանական շարունակությունը և միտված է ջրային ոլորտի արդիականացմանը:
- Ծրագրի հիմնական տեսլականը կլիմայի նկատմամբ դիմակայուն ոռոգման և ջրամատակարարման համակարգերի ներդրումն է, ինչը թույլ կտա նվազեցնել կլիմայական ռիսկերը և խթանել հարմարվողականությունը: Գործունեությունը ծավալվելու է չորս հիմնական ուղղություններով՝ ջրային ոլորտի ինստիտուցիոնալ հզորացում, գյուղական ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների բարելավում, ոռոգման ենթակառուցվածքների նորացում, ինչպես նաև ծրագրի արդյունավետ կառավարում:
- Այս բարեփոխումներից անմիջականորեն օգտվելու են գյուղատնտեսությամբ զբաղվող ֆերմերները, Ջրօգտագործողների ընկերությունները և գյուղական համայնքների բնակիչները, ովքեր կստանան որակյալ և կայուն ծառայություններ: Ծրագրի իրականացման պատասխանատուն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Ջրային կոմիտեն է: Համաձայնագիրը ստորագրվել է 2025 թվականի սեպտեմբերի 11-ին, իսկ աշխատանքների ավարտի վերջնաժամկետ է սահմանված 2026 թվականի մարտի 31-ը:

«Գնումների մասին» օրենքում լրացում կատարելու մասին ՀՕ-55-Ն և «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին ՀՕ-56-Ն (ընդունված՝ 04.03.2026 թ., ուժի մեջ՝ 28.03.2026թ.)

- Նախագծերի ընդունման արդյունքում ակնկալվում է սահմանել հետևյալը՝

1. եթե գնման գործընթացի հրավերը պարունակել է տեղեկություն գործընթացը հանրային կամ պաշտպանության և ազգային անվտանգության շահերի ապահովման նպատակով կազմակերպված լինելու մասին, ապա գնման գործընթացի շրջանակներում պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների բողոքարկումը չի կասեցնում գնման գործընթացը: Ընդ որում, տեղեկությունը հրավերում կարող է ներառվել Կառավարության նախնական համաձայնության դեպքում:
2. պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների բողոքարկման հետ կապված վեճերով դատարանի եզրափակիչ դատական ակտերի կատարումը չի կարող կասեցվել այդ ակտերի դեմ բերված վերաքննիչ և վճռաբեկ բողոքները վարույթ ընդունելու հիմքով.
3. գնումների հետ կապված վեճերով կայացված վճիռների դեմ բերված բողոքների քննության արդյունքով վերաքննիչ դատարանի կայացրած որոշումների, բացառությամբ գործի վարույթը հաշտության համաձայնությամբ ավարտելու մասին, ինչպես նաև վերաքննիչ բողոքից հրաժարվելու հիմքով վերաքննիչ վարույթը կարճելու մասին որոշումների, դեմ վճռաբեկ բողոք կարող է բերվել այդ ակտերի հրապարակման պահից տասնհինգօրյա ժամկետում:

Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՕ-61-Ն (ընդունված՝ 04.03.2026 թ., ուժի մեջ՝ 28.03.2026թ.)

- Պետության կողմից ֆինանսավորվող ծրագրերի շրջանակներում շահութահարկ վճարողներին որպես արդեն իսկ կատարված ծախսերի փոխհատուցում տրամադրված նպատակային դրամական միջոցների գծով եկամտի որոշման առանձնահատուկ կանոնների վերանայվում են:
- Ընդհանուր կանոնին համապատասխան՝ անհատույց ստացված դրամական միջոցները եկամուտ են համարվում դրանց ստացման հարկային տարում, իսկ պետության կողմից ֆինանսավորվող ծրագրերի շրջանակներում ստացված դրամական միջոցների մասով ներկայումս սահմանված են առանձնահատուկ կարգավորումներ: Մասնավորապես՝ որպես արդեն իսկ կատարված ծախսերի կամ ստացված վնասների փոխհատուցում ստացված նպատակային դրամական միջոցները եկամուտ են համարվում դրանց ստացման հարկային տարում, բացառությամբ գյուղատնտեսության ոլորտի պետական աջակցության ծրագրերի, որոնց շրջանակներում որպես արդեն իսկ կատարված ծախսերի փոխհատուցում ստացված նպատակային դրամական միջոցները եկամուտ են համարվում այն հարկային տարում, երբ ձեռք բերված, կառուցված, ստեղծված կամ մշակված ակտիվները ճանաչվում են որպես ծախս կամ կորուստ՝ անկախ այդ ծախսը կամ կորուստը համախառն եկամտից նվազեցնելու հանգամանքից:
- Փոփոխություններով առաջարկվում է սահմանել, որ անկախ գործունեության իրականացման ոլորտից, պետության կողմից ֆինանսավորվող ծրագրերի շրջանակներում շահութահարկ վճարողների կողմից որպես ձեռք բերված, կառուցված, ստեղծված կամ մշակված ակտիվների գծով արդեն իսկ կատարված ծախսերի փոխհատուցում ստացված նպատակային դրամական միջոցները եկամուտ են համարվում այն հարկային տարում, երբ ձեռք բերված, կառուցված, ստեղծված կամ մշակված ակտիվները ճանաչվում են որպես ծախս կամ կորուստ՝ անկախ այդ ծախսը կամ կորուստը համախառն եկամտից նվազեցնելու հանգամանքից:
- Մինչև 2026թ. դեկտեմբերի 31-ը ներառյալ գյուղատնտեսական արտադրանքի արտադրությամբ զբաղված շահութահարկ վճարողները ազատվում են շահութահարկի վճարումից իրենց կողմից գյուղատնտեսական արտադրանքի իրացումից ստացվող եկամտի, ինչպես նաև այլ ակտիվների իրացումից ստացվող և այլ եկամուտների մասով, եթե այլ ակտիվների իրացումից ստացվող և այլ եկամուտների տեսակարար կշիռը համապատասխան հարկային տարվա համախառն եկամտի մեջ չի գերազանցում 10%-ը:
- Նկատի ունենալով այն հանգամանքը, որ պետության կողմից ֆինանսավորվող ծրագրերի շրջանակներում գյուղատնտեսության ոլորտի տնտեսավարող սուբյեկտների կողմից ներգրավված վարկերի (լիզինգի) գումարները և դրանց գծով հաշվարկվող տոկոսագումարները պետության կողմից սուբսիդավորվելու դեպքում հանդիսանում են եկամուտ և համախառն եկամտի 10%-ը գերազանցելու դեպքում առաջացնում են շահութահարկի անհարկի պարտավորություններ, նախագծով առաջարկվում է սահմանել, որ շահութահարկ վճարողների համար եկամուտ չեն համարվում պետության կողմից ֆինանսավորվող՝ գյուղատնտեսության ոլորտի պետական աջակցության ծրագրերի շրջանակներում ստացված՝ վարկերի (լիզինգի) և դրանց գծով հաշվարկվող տոկոսադրույքների սուբսիդավորման գումարները, որոնք միաժամանակ և ծախս չեն համարվելու:
- Նախատեսվում է, որ վերոնշյալ փոփոխությունների կիրառությունը տարածվելու է 2022թ. հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների նկատմամբ:

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին ՀՕ-70-Ն (ընդունված՝ 04.03.2026 թ., ուժի մեջ՝ 31.03.2026թ.)

- Փոփոխությամբ առաջարկում է, որ աշխարհի լավագույն բարձրագույն ուսումնական հաստատությունների ակադեմիական վարկանիշավորման http://www.shanghairanking.com ցանկում ընդգրկված 50 համալսարաններից մեկում սովորող զինակոչիկներին կտրվի պարտադիր զինվորական ծառայության տարկետում: Եթե ուսումը ավարտելուց հետո առնվազն երեք տարի տարկետում ստացած անձինք աշխատեն Կառավարության կողմից սահմանված ոլորտում, ապա կարող են ամբողջությամբ ազատվել պարտադիր զինվորական ծառայությունից: Տարկետման և ազատման պայմաններն ու կարգը սահմանում է ՀՀ կառավարությունը:

«Ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին ՀՕ-59-Ն (ընդունված՝ 04.03.2026 թ., ուժի մեջ՝ 06.04.2026թ.)

- Նախատեսվում է ստեղծել սպորտի կառավարման տեղեկատվական համակարգ՝ սպորտային գործունեության կառավարման, կազմակերպման, վերլուծության և տվյալների պահպանման նպատակով: Այն կապահովի տվյալների ավտոմատացված հավաքագրումը, մշակումը, պահպանումը:

Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՕ-57-Ն և Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն եւ լրացում կատարելու մասին ՀՕ-58-Ն (ընդունված՝ 04.03.2026 թ., ուժի մեջ՝ 06.04.2026թ.)

- Կսահմանվի դատավարական իրավունքների չարաշահման անթույլատրելիությունը՝ որպես վարչական դատավարության սկզբունք:
- Որոշ փոփոխություններ են նախատեսվում նաև հայցադիմումը վերադարձնելու և կրկին ներկայացնելու կարգավորումներում, մասնավորապես՝
  1. Փոփոխությունների արդյունքում վարչական գործերի վարումը դառնում է առավելապես էլեկտրոնային, վերացվում են նախկինում եղած որոշ բացառություններ, և միաժամանակ հստակեցվում են այն դեպքերը, երբ համակարգից դուրս ձևավորված նյութերը կարող են ներառվել գործի կազմում,
  2. Փոփոխությունները վերաբերում են նաև Համակարգը չօգտագործող անձին դատավարական փաստաթղթերի ուղարկման փաստի ապացուցմանը. այլևս հնարավոր կլինի կցել ոչ միայն սկանավորված տարբերակով, այլև ուղղակի ապացույցը ներկայացնելով,
  3. Լրացվում է նոր կարգավորում, համաձայն որի՝ եթե տվյալ գործի համար օրենսգրքով նախատեսված են քննության հատուկ ժամկետներ, ապա ծանուցագիրը համարվում է ստացված ոչ թե երեք աշխատանքային օր անց (ըստ ընդհանուր ժամկետի), այլ արդեն հաջորդ օրը՝ այն պահից հետո, երբ այն դարձել է հասանելի Համակարգում,
  4. Այսուհետ բավարար կլինի, որ կա՛մ պետական տուրքը վճարված լինի Համակարգի միջոցով, կա՛մ դատարանը կարողանա հավաստիանալ վճարման կատարված լինելու փաստին (անկախ նրանից՝ վճարումը կատարվել է Համակարգով, թե ոչ),
  5. Սահմանվում է, որ դատարանը հայցվորին վերադարձնում է միայն այն փաստաթղթերը, որոնցում առկա են սխալներ ամբողջ հայցադիմումն ու կից փաստաթղթերը վերադարձնելու փոխարեն: Նախատեսվում է, որ եթե վերադարձման որոշումը բողոքարկվել է, բայց հայցադիմումը կրկին ներկայացվել է, դատարանը դրա ընդունման հարցը կլուծի միայն բողոքարկման արդյունքից հետո: Պարտադիր է դառնում, որ կրկին ներկայացվող հայցադիմումին կցվի դիմում՝ սխալները վերացված լինելու մասին, հակառակ դեպքում այն կդիտարկվի որպես նոր հայցադիմում:
- Սահմանվում են գործերի միացման ավելի մանրամասն կանոններ:
- Նախկինում բավարար էր, որ առկա լինի հիմնավոր կասկած, թե վարչական ակտի կատարումը կարող է հայցվորին պատճառել զգալի վնաս կամ անհնար դարձնել նրա իրավունքների պաշտպանությունը, ապա այժմ ավելացվում է ևս մեկ կարևոր պայման:
- Մասնավորապես, միջնորդությունը կբավարարվի միայն այն դեպքում, եթե վարչական ակտի կասեցումը չի խախտում այնպիսի հանրային շահ, որը տվյալ իրավիճակում գերակա է հայցվորի շահի նկատմամբ:

«Բուսասանիտարիայի մասին» օրենքում և հարակից օրենքներում լրացում և փոփոխություններ կատարելու մասին ՀՕ-74-Ն (ընդունված՝ 04.03.2026 թ., ուժի մեջ՝ 09.04.2026թ.)

- Նախագծով առաջարկվում է սահմանել, որ Հայաստանի Հանրապետությունում պեստիցիդների և ագրոքիմիկատների արտադրությունը և վաճառքը կդառնան օրենքով սահմանված լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներ: Նախկինում դրանք համարվում էին ծանուցման ենթակա գործունեության տեսակներ: Նախատեսվող փոփոխությունների համաձայն՝ լիազոր մարմինն իրականացնելու է պեստիցիդների և ագրոքիմիկատների արտադրության և վաճառքի լիցենզիայի պայմանների ու պահանջների կատարման նկատմամբ վերահսկողություն:
- Փոփոխություններ են նախատեսվում նաև բուսասանիտարական հսկողության ենթակա ապրանքների վարակազերծման ու ոչնչացման մասին կարգավորումներում: Մասնավորապես, վերջին շրջանում Հայաստանի Հանրապետությունից արտահանվող կարանտին բուսասանիտարական հսկողության ենթակա բեռների նկատմամբ սահմանային պետական վերահսկողություն իրականացնելու արդյունքում կարանտին վնասակար օրգանիզմների հայտնաբերումը խնդիրներ է առաջացնում հայկական ծագման բեռների անխափան արտահանման առումով: Նշված խնդրի լուծումներից մեկը արտահանումից առաջ դրանց նկատմամբ վարակազերծման իրականացումն է: Իսկ վարակազերծման համակարգի ստեղծման համար անհրաժեշտ են օրենսդրական լիազորությունների սահմանումներ, համապատասխան ընթացակարգերի մշակում, վարակազերծման մեթոդներին ներկայացվող ընդհանուր պահանջների սահմանում, որոնց էլ ուղղված են նախատեսվող փոփոխությունները:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում և հարակից օրենքներում լրացում կատարելու մասին ՀՕ-63-Ն (ընդունված՝ 04.03.2026 թ., ուժի մեջ՝ 06.04.2026թ.)

- Առաջարկվում է վերանայել դատավորների, դատախազների, քննիչների թեկնածուների ընտրության, նշանակման և առաջխաղացման գործընթացները, նախատեսել մասնավորապես բարեվարքության վերաբերյալ եզրակացությանն առնչվող նոր կարգավորումներ:

«Ճանապարհային երթեւեկության անվտանգության ապահովման մասին» օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին ՀՕ-62-Ն (ընդունված՝ 04.03.2026 թ., ուժի մեջ՝ 06.04.2026թ.)

- Օրենքի նախագծով հստակեցվում են անձի՝ տրանսպորտային միջոց վարելու հակացուցում ունեցող առողջական վիճակով պայմանավորված՝ տրանսպորտային միջոց վարելու իրավունքի ինքնաշխատ դադարեցման իրավական հիմքերը: Միաժամանակ, նախատեսվում է վարելու իրավունքի դադարեցման վերաբերյալ տվյալ անձի տեղեկանալու մասին կարգավորում: Բացի այդ, առաջարկվում է ՀՀ ներքին գործերի նախարարության հաշվեկշռում առկա տրանսպորտային միջոցների տեխնիկական զննությունն իրականացնել ՀՀ ներքին գործերի նախարարության իրավասու ստորաբաժանման միջոցով:

«Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» օրենքում և հարակից օրենքներում փոփոխություն կատարելու մասին ՀՕ-78-Ն (ընդունված՝ 04.03.2026 թ., ուժի մեջ՝ 09.04.2026թ.)

- Նախագծի նպատակն է կարգավորել որոշակի հուշարձանների, մասնավորապես, պաշտամունքային կառույցների՝ այլ սուբյեկտների օտարման իրավահարաբերությունները:
- Առաջարկվում է, որ հիշյալ կառույցները գտնվեն համապատասխան կրոնական կազմակերպությունների ներքո, իսկ օտարման դեպքում ապահովվի կառավարության հնարավորությունը համաձայնություն տալու կամ մերժելու գույքային իրավունքները հատուցմամբ կամ անհատույց փոխանցելու վերաբերյալ գործարքը:
- Որպես կարգավորում՝ նախատեսվել է Հայաստանի Հանրապետության իրավունքը՝ համաձայնություն տալու կամ մերժելու գույքային իրավունքները հատուցմամբ կամ անհատույց փոխանցելու գործարքի վերաբերյալ:

ՄԱՐՏ ԱՄՍԻՆ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆՈՂ ՕՐԵՆՔՆԵՐ*

«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՕ–48–Ն և «Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՕ–49–Ն (ընդունված՝ 13.02.2026թ, ուժի մեջ՝ 07.03.2026թ.)

- Փաթեթի ընդունմամբ ստեղծվում է իրավական հիմք հաշմանդամություն ունեցող անձանց աջակցող միջոցների տրամադրման կամ վերանորոգման դիմաց փոխհատուցում ապահովելու համար՝ ոչ միայն պետական բյուջեի, այլև օրենքով չարգելված այլ միջոցների հաշվին:
- Նախատեսվում է նաև, որ այն անձինք, ովքեր անցել են ֆունկցիոնալության գնահատում և նրանց վերաբերյալ առկա է ուժի մեջ գտնվող ֆունկցիոնալության գնահատման որոշում, ապա նոր ծառայություններ ստանալու համար կրկին ֆունկցիոնալության գնահատում չեն անցնի, այլ փոփոխությունը կկատարվի միայն ԾԱԾ-ում:

«Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին ՀՕ-384-Ն և ՀՀ քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին ՀՕ-385-Ն (13.11.2025թ., ուժի մեջ՝ 01.03.2026թ.)

- Նախատեսվում է, որ բռնություն գործադրած անձը պարտավոր է կրել անհետաձգելի միջամտության որոշման կատարումն ապահովելու նպատակով օգտագործվող էլեկտրոնային հսկողության միջոցը: Բռնություն գործադրած անձի կողմից էլեկտրոնային հսկողության միջոց կրելուց խուսափելը կամ հրաժարվելն առաջացնում է քրեական պատասխանատվություն:

ՀՀ ջրային օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին ՀՕ-43-Ն և «Հայաստանի Հանրապետության ջրի ազգային ծրագրի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՕ-44-Ն (ընդունված՝ 11.02.2026թ., ուժի մեջ՝ 05.03.2026թ.)

- Օրենքով նախատեսվում է, որ գետերի վարարումների հետևանքով հեղեղումները կանխելու, ոռոգելի աղակալված հողերի լվացման, ոռոգելի հողերին խոնավալիցք հաղորդելու և ոռոգում կատարելու նպատակով՝ բացառապես ինքնահոս եղանակով հաշվառված և ոչ ջրամբարներից բաց թողնված ջուրը սույն օրենսգրքի պահանջներին համապատասխան տրված ջրօգտագործման թույլտվությամբ ջրօգտագործողներին մատակարարվում է անհատույց՝ Կառավարության որոշմամբ սահմանված կարգով:
- Միաժամանակ, սահմանվում է, որ ջրային ռեսուրսների նվազման հետևանքները մեղմելու և ջրալրում իրականացնելու, ինչպես նաև ոռոգելի հողերին խոնավալիցք հաղորդելու նպատակով ջրային ռեսուրսները տեղափոխվում են անհատույց Ջրային օրենսգրքի պահանջներին համապատասխան տրված ջրօգտագործման թույլտվությամբ:

«Պետական տուրքի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին ՀՕ-47-Ն (ընդունված՝ 11.02.2026թ., ուժի մեջ՝ 07.03.2026թ.)

- Նախատեսվում են արտոնություններ դատարաններում պետական տուրքի վճարումից ազատելու ընտանեկան բռնության ենթարկված այն անձանց համար, ովքեր հայցադիմում են ներկայացնում ամուսնալուծության, հայրության որոշման վերաբերյալ հարցերով և այլն:

*Սույն բաժինը ներառում է այն օրենքները, որոնք ընդունվել են ավելի վաղ, սակայն ուժի մեջ են մտնում մարտ ամսին: Մարտ ամսին ընդունված և նույն ամսին ուժի մեջ մտած օրենքները ներկայացված են տեղեկագրի առաջին բաժնում և չեն կրկնվում սույն բաժնում:

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

ՀՀ կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 9-ի N 1251-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին (N 249–Ն, ընդունված՝ 05.03.2026թ., ուժի մեջ՝ 01.04.2026թ.)

- Նախաձեռնությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ ներկայումս շատ էլեկտրամոբիլների վրա բացակայում են հզորության մասին հստակ նշումները, ինչը քաղաքացիների համար խնդիրներ է առաջացնում հատկապես գույքահարկի տարեկան վճարման տեսանկյունից:
- Այսուհետ էլեկտրամոբիլների հզորությունը կորոշվի էլեկտրոնային անձնագրերի միասնական շտեմարանի տվյալների հիման վրա: Այն դեպքերում, երբ համակարգում տվյալները բացակայեն, հզորությունը կհաշվարկվի հատուկ բանաձևերով և գործակիցներով՝ հիմք ընդունելով մեքենայի առավելագույն (պիկային) հզորությունը.
  1. Մինչև 250 ձիաուժ հզորության դեպքում՝ պիկային հզորությունը կբաժանվի 1.5 գործակցի վրա:
  2. 251 և ավելի ձիաուժի դեպքում՝ կկիրառվի ավելի բարդ հաշվարկային բանաձև (1.5 և 2.5 գործակիցների համադրությամբ):
- Արդեն իսկ գրանցված էլեկտրամոբիլների տվյալները էլեկտրոնային ռեգիստրում և հաշվառման վկայագրերում կփոփոխվեն ինքնաշխատ (ավտոմատ) եղանակով: 2026 թվականի հունվարի 1-ից սկսած՝ սեփականատերերը և համապատասխան մարմինները կիրազեկվեն կատարված փոփոխությունների մասին:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին (N 276–Ն, ընդունված՝ 12.03.2026թ., ուժի մեջ՝ 13.03.2026թ.)

- Կառավարությունը նախատեսում է փոփոխություն կատարել գնումների գործընթացի կազմակերպման կարգում, որը վերաբերում է Հայաստանի տարածքից դուրս իրականացվող ձեռքբերումներին: Այս փոփոխության նպատակն է վերացնել առկա իրավական անհստակությունները և դարձնել գործընթացն ավելի ճկուն ու թափանցիկ:
- Գործող կարգի համաձայն՝ երբ պետական մարմինը Հայաստանից դուրս գնում է կատարում «մեկ անձից» ձևով և գործարքի արժեքը գերազանցում է բազային միավորի 70-ապատիկը, գնման կարգը պետք է հաստատի տվյալ գերատեսչության ղեկավարը: Այժմ առաջարկվում է օրենսդրորեն ամրագրել, որ նմանատիպ խոշոր գնումները կարող են իրականացվել երկու տարբերակով.
  1. Տվյալ պետական մարմնի ղեկավարի կողմից հաստատված կարգով,
  2. Կամ Կառավարության անհատական որոշմամբ:

ՀՀ կառավարության 2021 թվականի հունիսի 17-ի N 987-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (N 282–Ն, ընդունված՝ 12.03.2026թ., ուժի մեջ՝ 13.03.2026թ.)

- Որոշումը նպատակ ունի լուծել հողերի նպատակային նշանակության փոփոխության ընթացքում ի հայտ եկած մի շարք խնդիրներ: Կատարվում են հետևյալ փոփոխությունները.
  1. Գործող կարգավորումները թույլ չէին տալիս օրինականացնել այն շինությունները, որոնք կառուցվել էին 2021 թվականի որոշման ընդունումից հետո: Փոփոխությամբ գործընթացը համապատասխանեցվում է Քաղաքացիական օրենսգրքին՝ թույլ տալով օրենքով սահմանված ժամկետներում Կադաստրի կոմիտեում հաշվառված կառույցների համար իրականացնել հողի նշանակության փոփոխություն:
  2. Այսուհետ հնարավոր կլինի 4-րդ և 5-րդ գնահատման խմբի գյուղատնտեսական ցածրարժեք հողերը փոխադրել ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի՝ այնտեղ արտադրական և պահեստային շինություններ կառուցելու նպատակով: Սա կնպաստի տնտեսության այլ ճյուղերում ներդրումների ներգրավմանը և նոր աշխատատեղերի ստեղծմանը:
  3. Որոշումից հանվում է շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության կրկնակի պահանջը, քանի որ այդ գործընթացն արդեն իսկ կարգավորվում է համապատասխան օրենքով:
  4. Հստակեցվում են կանոնները, թե ինչպես պետք է փոխվի հողի նշանակությունը գազաբաշխիչ կայանների, հենասյուների, պետական և համայնքային օբյեկտների, ինչպես նաև գյուղատնտեսական արտադրական այլ շինությունների կառուցման դեպքում:
  5. Նախատեսվում է հնարավորություն տալ ուղղելու կադաստրային քարտեզներում առկա այն անճշտությունները, որոնք վերաբերում են հողամասերի նպատակային նշանակություններին:

ՀՀ կառավարության 2021 թվականի հուլիսի 22-ի N 1188-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին (N 362–Ն, ընդունված՝ 26.03.2029126թ., ուժի մեջ՝ 27.03.2026թ.)

- Առաջարկվում է ապոստիլի տրամադրման մեկօրյա ներկայիս ժամկետը փոխարինել երկօրյա ժամկետով՝ պահպանելով 7 000 ՀՀ դրամ պետական տուրքը, ինչպես նաև ներդնել արագացված ընթացակարգ, որով ապոստիլը կտրամադրվի մեկօրյա ժամկետում՝ դիմողի ցանկությամբ և հավելյալ 10 000 ՀՀ դրամ վճարի դիմաց:

Վերելակների անվտանգ շահագործման տեխնիկական անվտանգության նորմերը, կանոնները և հրահանգները սահմանելու մասին (N 346–Ն, ընդունված՝ 26.03.2029126թ., ուժի մեջ՝ 05.04.2026թ.)

- Սահմանվում են վերելակների անվտանգ շահագործման տեխնիկական անվտանգության նորմերը, կանոնները և հրահանգները, այդ թվում՝ սարքավորումների մոնտաժման, անվտանգ շահագործման, սպասարկման վերաբերյալ տեխնիկական անվտանգության պահանջները, որոնց գործողությունը տարածվում է բոլոր վերելակների վրա, եթե դրանք տեղադրված են հանրային նշանակության կառույցներում, արտադրական շինություններում, բազմաբնակարանային շենքերում, ընդհանուր օգտագործման համար նախատեսված այլ վայրերում:

Անհատական և հրապարակային ծանուցումը տեղադրելու, ծանուցումը տեղադրելու մասին անձին տեղեկացնելու, Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված հարկային մարմնի հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային կառավարման համակարգի անձնական էջ և պաշտոնական էլեկտրոնային փոստ մուտք գործելը և ծանուցումը կարդալը հավաստվելու, ծանուցման հետ ցանկացած գործողություն կատարելու վերաբերյալ տեղեկությունները հաշվառելու (լոգավորման) և լոգերը պահպանելու կարգը սահմանելու մասին (N 385–Ն, ընդունված՝ 26.03.2029126թ., ուժի մեջ՝ 26.09.2026թ.)

- Որոշմամբ ներդրվում է «hartak.am» համակարգը, որը հանդիսանում է ֆիզիկական անձանց ծանուցումների իրականացման կենտրոնացված հարթակ, և թույլ է տալիս պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին ապահովել ծանուցումների գեներացումը և տեղադրումը համապատասխան հարթակներում՝ օգտագործելով տվյալների փոխանակման շերտը: Համակարգը հաշվառում է ոչ միայն մուտք գործելու, այլև ծանուցումը կարդալու, կից փաստաթղթերը դիտելու կամ բեռնելու ճշգրիտ ժամանակը (վայրկյանի ճշտությամբ)՝ միջազգային ստանդարտներին համապատասխան:
- Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի համար ծանուցումները տեղադրվում են հարկային մարմնի հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգի անձնական էջում, իսկ ֆիզիկական անձանց ծանուցումներն ուղարկվում են նրանց պաշտոնական էլեկտրոնային փոստին: Անձինք ծանուցման առկայության մասին կտեղեկացվեն նաև իրենց կողմից տրամադրված հավելյալ էլեկտրոնային փոստով կամ հեռախոսահամարին ուղարկվող կարճ հաղորդագրությամբ:
- Միևնույն ժամանակ, կարգավորվում են ինչպես ծանուցման այլ եղանակների սպառմամբ հրապարակային ծանուցումն իրականացնելու ընթացակարգերը, այնպես էլ մեծամասամբ պահպանվել են հրապարակային ծանուցման, որպես ծանուցումների ինքնուրույն տեսակի, գործող կարգավորումները:

ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 5-ի N 1699-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին (N 304–Ն, ընդունված՝ 19.03.2026թ., ուժի մեջ՝ 20.03.2026թ.)

- Որոշմամբ սահմանված չի եղել 2402 ծածկագրին դասվող ապրանքների համար ախոտի համարակցիզային դրոշմանիշների առումով սահմանված չի եղել դրանցով դրոշմավորման համար դրոշմանիշերի ստացման հայտերի ներկայացման վերջնամկետ: Առաջարկվում է սահմանել, որ ԱՏԳ ԱԱ 2204, 2205, 2206 00, 2207 և 2208 ծածկագրերին դասվող՝ ակցիզային դրոշմանիշերով դրոշմավորման ենթակա ապրանքները մինչև 2026 թվականի մարտի 27-ը ներառյալ ներկայացված՝ հայտերի հիման վրա ստացված ակցիզային դրոշմանիշերով դրոշմավորված լինելու դեպքում կարող են չդրոշմավորվել համաձայն հիմնական մոդելի:

ՀՀ կառավարության 2023 թվականի մարտի 9-ի N 290-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին (N 291–Ն, ընդունված՝ 19.03.2029126թ., ուժի մեջ՝ 20.03.2026թ.)

- Առաջարկվում է սահմանել, որ ԱՏԳ ԱԱ 2402 ծածկագրին դասվող՝ ակցիզային դրոշմանիշերով դրոշմավորման ենթակա ապրանքները մինչև 2026 թվականի մարտի 27-ը ներառյալ ներկայացված՝ հայտերի հիման վրա ստացված ակցիզային դրոշմանիշերով դրոշմավորված լինելու դեպքում կարող են չդրոշմավորվել համաձայն հիմնական մոդելի:

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏՈՎ ՀԱՎԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԺԱՆԱՑԱԾ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐ

«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծին հավանություն տալու մասին (N 234–Ա, ընդունված՝ 05.03.2026թ., ուժի մեջ՝ 06.03.2026թ.)

- Օրենքի փոփոխության նախագծով առաջարկվում է «Վերահսկելի մատակարարում և գնում» միջոցառումը ներառել գաղտնի քննչական գործողությունների շարքում,: Ներկայումս այն կիրառվում է միայն որպես օպերատիվ-հետախուզական միջոցառում, սակայն նոր կարգավիճակը թույլ կտա այն օգտագործել քրեական վարույթի շրջանակներում որպես ապացույց ձեռք բերելու արդյունավետ գործիք:

«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծին հավանություն տալու և անհետաձգելի համարելու մասին (N 300–Ա, ընդունված՝ 19.03.2026թ., ուժի մեջ՝ 20.03.2026թ.)

- Ներկայումս գործող կարգավորումներով թանկարժեք մետաղների և քարերի օտարումն ազատված է ԱԱՀ-ից, սակայն դրանցից պատրաստված ոսկերչական զարդերի օտարումը հարկվում է ԱԱՀ-ով՝ ընդհանուր կարգավորումների շրջանակներում: Ստացվում է, որ անկախ հումքի ԱԱՀ-ից ազատված լինելու հանգամանքից, զարդի մեջ առկա ոսկին և քարը արժեշղթայի հետագա օղակներում փաստացի հարկվում են ԱԱՀ-ով, ընդ որում՝ հումքի արժեքը հաճախ կազմում է զարդի արժեքի հիմնական մասը: Քանի որ ոսկին արժեշղթայով անցնելիս նորովի չի ստեղծվում որպես արժեք, այլ պարզապես վերափոխվում է՝ իր արժեքը փոխանցելով հաջորդ օղակներին, դրա նկատմամբ ԱԱՀ-ի բազմակի կիրառումը հանգեցնում է գների բարձրացման և խոչընդոտում ոլորտի զարգացմանը: Նախագծի նպատակն է՝ վերանայել ոսկուց և թանկարժեք քարերից պատրաստված իրերի օտարման գործարքների՝ ԱԱՀ-ով հարկման բազայի որոշման կանոնները (ներդնելով վերադիրի հարկման համակարգ)՝ ոսկեգործության ոլորտի զարգացման համար նպաստավոր հարկային միջավայր ձևավորելու ակնկալիքով:
- Նախագծով սահմանվում են ԱԱՀ-ով հարկման բազայի հաշվարկման նոր, արտոնյալ կանոններ, մասնավորապես՝
  1. Ոսկուց և թանկարժեք քարերից պատրաստված իրեր արտադրողի կողմից դրանց օտարման դեպքում ԱԱՀ-ով հարկման բազա կհամարվի ստանդարտ կարգով հաշվարկվող հարկման բազայի (իրացման գնի) և տվյալ իրի արտադրության համար օգտագործված ոսկու և թանկարժեք քարերի փաստաթղթավորված ձեռքբերման գնի դրական տարբերությունը;
  2. ԱԱՀ-ով հարկման բազա կհամարվի իրացման գնի (ստանդարտ կարգով հաշվարկվող բազայի) և տվյալ իրի՝ փաստաթղթերով հիմնավորված ձեռքբերման գնի (ներառյալ՝ ԱԱՀ-ն) դրական տարբերությունը;
  3. Եթե գործարքն անհատույց է կամ դրա հատուցման արժեքը 20 և ավելի տոկոսով ցածր է նույն կամ համանման ապրանքի իրական շուկայական արժեքից, ապա որպես հաշվարկային հիմք (իրացման գին) վերցվում է իրական արժեքի 80 տոկոսը, որից հանվում է ձեռքբերման գինը: Ընդ որում, արտադրողների մոտ այս դեպքում հաշվարկված ԱԱՀ-ի բազան չի կարող պակաս լինել գործարքի իրական արժեքի 80 տոկոսի 10 տոկոսից:
- Հաշվի առնելով, որ նոր համակարգի կիրառության պարագայում պետական բյուջե վճարվող ԱԱՀ-ի գումարները կլինեն ավելի փոքր, քան ձեռքբերումների ժամանակ հաշվանցվող (նախկինում վճարված) ԱԱՀ-ի գումարները, ինչը կհանգեցնի պետբյուջեից վերադարձման ենթակա գումարների անընդհատ գեներացման, նախագծով սահմանվում է կարևոր սահմանափակում: Ոսկուց և թանկարժեք քարերից պատրաստված իրերի առևտրական գործունեությամբ զբաղվող անձինք այլևս իրավունք չեն ունենա հաշվանցել (պակասեցնել) այդ իրերի ձեռքբերման ժամանակ մատակարարի կողմից դուրս գրված հարկային հաշվում կամ մաքսային հայտարարագրում առանձնացված ԱԱՀ-ի գումարները: Բացառություն են կազմելու միայն ԱԱՀ-ի 0 տոկոս դրույքաչափով հարկման ենթակա գործարքները (օրինակ՝ արտահանումը):
- Օրենքն ուժի մեջ է մտնելու 2026 թվականի հուլիսի 1-ից: Այն կկիրառվի այդ ամսաթվից հետո կատարվող օտարման գործարքների և դրանց վերագրվող ձեռքբերումների նկատմամբ: Առևտրականների համար հարկման բազայի որոշման նպատակով, մինչև նոր օրենքն ուժի մեջ մտնելը (մինչև 2026թ. հուլիսի 1-ը) արդեն իսկ ձեռք բերված ոսկյա իրերի և զարդերի ձեռքբերման գնի մեջ ԱԱՀ-ի գումարը չի ներառվի դրական տարբերությունը (վերադիրը) հաշվարկելիս:

«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերին հավանություն տալու և անհետաձգելի համարելու մասին (N 311–Ա, ընդունված՝ 19.03.2026թ., ուժի մեջ՝ 20.03.2026թ.)

- Օրենսդրական նոր փաթեթով նախատեսվում են համալիր փոփոխություններ, որոնց նպատակն է կատարելագործել հարկային վարչարարությունը, վերանայել հարկերից խուսափելու համար նախատեսված քրեական պատասխանատվության շեմերը և ներդնել բիզնեսի համար առավել բարենպաստ՝ գույքի արգելադրման այլընտրանքային մեխանիզմներ:
- **Հարկային օրենսգրքում փոփոխություններն ուղղված են հարկային հսկողության գործիքակազմի և վարչարարության ընթացակարգերի հստակեցմանը՝**
  1. Այսուհետ հարկային մարմինը ուսումնասիրության և վերլուծության ժամանակ իրավունք կունենա հիմնվել ոչ միայն հարկ վճարողի կողմից ներկայացված հաշվարկների ու տեղեկությունների վրա, այլև իրեն հայտնի դարձած այլ աղբյուրներից ստացված տեղեկությունների վրա: Այս ձևակերպումը վերացնում է գործող սահմանափակող մեկնաբանությունները:
  2. Օրենսգրքից հանվում է «հաստատապես հայտնի» եզրույթը՝ թեմատիկ ուսումնասիրություն սկսելու հիմքերի գնահատման հարցում իրավական անորոշությունը բացառելու նպատակով:
  3. Վերացվում է այն սահմանափակումը, ըստ որի թեմատիկ ուսումնասիրության հանձնարարագիրը կարող էր հրապարակվել տարեկան միայն մեկ անգամ: Ուժը կորցրած է ճանաչվում նաև 349.1-ին հոդվածի 3-րդ մասի «դ» ենթակետը, որով արգելվում էր ուսումնասիրել միասնական հաշվին մուտքագրման ենթակա գումարների հիմնավորվածության՝ նախկինում արդեն իսկ ուսումնասիրված հաշվետու ժամանակաշրջանները:
  4. Այսուհետ հարկային մարմնի վարչական ակտի հիման վրա քրեական վարույթ նախաձեռնող մարմնին հաղորդում կներկայացվի և քրեական վարույթ կնախաձեռնվի միայն այն դեպքում, երբ վարչական բողոքարկման բոլոր ընթացակարգերը սպառված կլինեն, և վարչական ակտը մտած կլինի ուժի մեջ: Բացառություն կկազմեն միայն այն դեպքերը, երբ առկա է անհետաձգելի քրեական վարույթ նախաձեռնելու անհրաժեշտություն՝ ապացույցների կորստի, ոչնչացման կամ թաքցման ողջամիտ կասկածի հիմքով:
- **Փոփոխություններ ՀՀ Քրեական օրենսգրքում.**
- Հարկերից խուսափելու համար սահմանված գումարային շեմերը էականորեն բարձրացվում և հստակեցվում են: Ներկայումս գործող 10 մլն (խոշոր) և 20 մլն (առանձնապես խոշոր) դրամի շեմերը փոխարինվում են նոր համակարգով, որը տարանջատում է մեկ տարվա և մի քանի տարվա խախտումները.
  1. Խոշոր չափ է համարվելու՝ մեկ հարկային տարվա ընթացքում 30 միլիոն դրամը գերազանցող պարտավորությունը, կամ իրար հաջորդող երկու հարկային տարիների ընթացքում 45 միլիոն դրամը գերազանցող պարտավորությունը:
  2. Առանձնապես խոշոր չափ է համարվելու՝ մեկ հարկային տարվա ընթացքում 50 միլիոն դրամը գերազանցող պարտավորությունը, կամ իրար հաջորդող երկու հարկային տարիների ընթացքում 75 միլիոն դրամը գերազանցող պարտավորությունը:
- **ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքում.**
- Ներդրվում է գույքի արգելադրման նոր՝ այլընտրանքային մեխանիզմ: Օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-4-րդ կետերով նախատեսված գույքի բացակայության դեպքում դրան համարժեք արգելադրված գույքը կամ սույն օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով նախատեսված հիմքով արգելադրված գույքը կարող է հանվել արգելանքից, եթե գույքի սեփականատերը կամ տիրապետողը ներկայացնում է արգելադրված գույքին համարժեք բանկային երաշխիք:

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերին հավանություն տալու մասին (N 339–Ա, ընդունված՝ 26.03.2029126թ., ուժի մեջ՝ 27.03.2026թ.)

- Նախագծով առաջարկվում է պայմանական վաղաժամկետ ներկայացման գործընթացի շրջանակում պահանջվող գործողությունները (զեկույցի կազմում, դատարան ներկայացնելու կամ չներկայացնելու որոշում, դատարանում հանդես գալ)՝ վերապահել քրեակատարողական հիմնարկին: Նախագծով առաջարկվող կարգավորումների համատեքստում՝ անձը պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ կարող է ազատվել միայն այն դեպքում, երբ նրա կողմից նոր հանցանք կատարելու հավանականությունը ցածր է, և միաժամանակ վարքագիծը ոչ պատշաճ է միայն այն հիմքով, որ նա չի հատուցել կամ այլ կերպ հարթել տուժողին պատճառված վնասը:

«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծին հավանություն տալու մասին (N 330–Ա, ընդունված՝ 26.03.2029126թ., ուժի մեջ՝ 27.03.2026թ.)

- Նախագծով սահմանվում է քրեական վարույթի ամրագրման թղթային եղանակ պետական գաղտնիք պարունակող քրեական վարույթներով վարութային գործողությունների համար՝ համակարգչով, իսկ դրա անհնարինության դեպքում՝ ձեռագիր կազմված արձանագրությամբ:
- Նախատեսվում է նաև հոգեբանին բացարկ հայտնելու ինստիտուտը, որը կկարգավորվի քրեական վարույթի այլ օժանդակ մասնակիցներին բացարկ հայտնելու կարգով:
- Ավելացվում է դրույթ գրավի հետ կապված,, որով սահմանվում է, որ գրավատուի դիմումի և հիմնավորող փաստաթղթի հիման վրա վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ գրավադրված անշարժ գույքը կարող է փոխարինվել համարժեք այլ գույքով կամ գումարով:
- Նախատեսվում է նոր դրույթ ըստ որի գույքի արգելադրման մասին որոշման իրավաչափությունը հաստատելու միջնորդության քննության արդյունքով դատարանը կարող է որոշում կայացնել նաև միջնորդությունը մասնակի բավարարելու և գույքի արգելադրման մասին քննիչի որոշման իրավաչափությունը մասամբ հաստատելու մասին:
- Բացառիկ վերանայման վարույթի հարուցման կարգավորումները համալրվում են նոր դրույթով, ըստ որի բացառիկ վերանայման բողոքը վերադարձնելու մասին որոշումն իրավասու դատարանը կայացնում է բողոքը ստանալուց հետո 10օրյա ժամկետում:

«Բանկերի վերակառուցման մասին» օրենքի և հարակից օրենքների նախագծերին հավանություն տալու մասին (N 369–Ա, ընդունված՝ 26.03.2029126թ., ուժի մեջ՝ 28.03.2026թ.)

- Օրենքի նախագիծը սահմանում է ՀՀ տարածքում գործող բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի վերակառուցման կարգն ու պայմանները: Այս գործընթացը հանդիսանում է Կենտրոնական բանկի բացառիկ իրավասությունը և նպատակ ունի ապահովել ֆինանսական համակարգի կայունությունը, ձախողվող բանկերի կրիտիկական գործառնությունների անընդհատությունը և պետական միջոցների պաշտպանությունը՝ նվազեցնելով պետական արտակարգ աջակցության անհրաժեշտությունը: Օրենքի հիմնարար սկզբունքներից է այն, որ վերակառուցման ընթացքում վնասները առաջնահերթ կրում են բանկի բաժնետերերն ու պարտատերերը, սակայն երաշխավորվում է, որ նրանցից ոչ ոք ավելի մեծ վնաս չի կրի, քան կկրեր բանկի լուծարման դեպքում:
- Վերակառուցման գործընթացը ֆինանսավորելու համար ստեղծվում է հատուկ Վերակառուցման հիմնադրամ, որի միջոցները ձևավորվում են բանկերի կողմից կատարվող միանվագ, պարբերական և լրացուցիչ վճարներից: Կենտրոնական բանկն իրավասու է կիրառել վերակառուցման չորս հիմնական գործիքներ, որոնք են բանկի կամ դրա մի մասի վաճառքը երրորդ անձի, կամուրջ բանկի ստեղծումը, ակտիվների առանձնացումը և ներքին աջակցության կամ «bail-in» գործիքը: Ներքին աջակցության շրջանակներում բանկի պարտավորությունները կարող են դուրս գրվել կամ փոխարկվել կապիտալի, սակայն սահմանված են հստակ բացառություններ, մասնավորապես՝ ֆիզիկական անձանց մինչև երկու հարյուր միլիոն դրամի ավանդները ենթակա չեն դուրսգրման կամ փոխարկման:
- Օրենքը շեշտում է, որ վերակառուցման գործիքների կիրառման համար չի պահանջվում բանկի մասնակիցների կամ պարտատերերի համաձայնությունը, իսկ ավանդատուների երաշխավորված ավանդները մնում են լիարժեք պաշտպանված: Կենտրոնական բանկը յուրաքանչյուր բանկի համար պետք է մշակի անհատական վերակառուցման ծրագիր, որը ենթակա չէ հրապարակման և պետք է վերանայվի առնվազն տարեկան մեկ անգամ:
- Նախատեսվում է, որ օրենքը ուժի մեջ է մտնելու 2027 թվականի հունվարի 1-ից, և Կենտրոնական բանկին տրվում է չորս տարի ժամանակ՝ բոլոր գործող բանկերի համար վերակառուցման ծրագրերը հաստատելու համար:
- Փաթեթի փոփոխություններով «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձանց, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» օրենքի անվանումը փոխվում է և դառնում «Ֆինանսական կազմակերպությունների սնանության մասին» օրենք և դրանում կատարվում են այլ համապատասխան փոփոխություններ:

«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի և «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացում կատարելու մասին» սահմանադրական օրենքի նախագծերին հավանություն տալու մասին (N 368–Ա, ընդունված՝ 26.03.2026թ., ուժի մեջ՝ 27.03.2026թ.)

- Քրեական դատավարության օրենսգրքում փոփոխությամբ կվերացվի պահեստային դատավորի ինստիտուտը և դրա փոխարեն կներդրվեն այլ կառուցակարգեր, որոնք կապահովեն դատական գործի քննության արդյունավետ և բնականոն շարունակությունը: Ներդրվում է դատավորի փոփոխության դեպքում գործը նորից չսկսելու և վարույթն ընդհատված պահից շարունակելու մեխանիզմը:
- Առաջին ատյանում դատաքննության համար սահմանվում է մեկ տարի ուղենշային ժամկետ: Կողմերի համաձայնությամբ հնարավոր է դառնում որոշակի ապացույցներ համարել հետազոտված՝ առանց վկաներին կամ փորձագետներին դատարան կանչելու: Խստացվել են պաշտպանի պարտադիր մասնակցության պահանջները, իսկ մեղադրյալի բացակայությամբ նիստերն այժմ թույլատրելի են միայն փաստաբանի առկայության դեպքում:
- Դատական օրենսգրքում սահմանվում են կարգապահական վարույթի նոր հիմքեր՝ ՄԻԵԴ-ի կողմից արձանագրված խախտումները, բարեվարքության բացասական եզրակացությունը և դատական գործերի քննության առավելագույն ժամկետների խախտումը:

ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՍՊԱՍՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ստորև ներկայացված նախագծերը ընդունվել են առաջին ընթերցմամբ:

«Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին (հասանելի է հետևյալ հղումով)

- Նախագծով առաջարկվում է պետական տուրքի նոր տեսակների սահմանում որոնք կիրառվում են մշակութային արժեքների արտահանման գործընթացների իրականացման համար: Նախագծով մասնավորապես նախատեսվում է՝ մաքսային մարմինների կողմից մշակութային արժեքների համար գանձվող պետական տուրքի տարանջատում: Նախագծով նախատեսված փոփոխություններով կարգավորվում է կազմակերպությունների կամ անհատների կողմից մշակութային արժեքների արտահանման նպատակով պետական տուրքի վճարման գործընթացի կազմակերպումն է:
- Մշակութային արժեքների և հանքագիտության ու հնէաբանության հավաքածուների արտահանման, ժամանակավոր արտահանման, ինչպես նաև մաքսային տարածքից դուրս վերամշակման նպատակով արտահանման թույլատրող փաստաթղթերի տրամադրման համար պետական տուրքը սահմանվում է հետևյալ չափերով. մեկ մշակութային արժեքի դեպքում՝ բազային տուրքի տասնապատիկի չափով, իսկ երկու և ավելի մշակութային արժեքների դեպքում՝ բազային տուրքի տասնհինգապատիկի չափով: Նշված թույլատրող փաստաթղթերի կրկնօրինակի տրամադրման համար պետական տուրքը սահմանվում է բազային տուրքի եռապատիկի չափով: Սույն դրույթներով սահմանված պետական տուրքի դրույքաչափերը չեն ներառում համապատասխան ծառայությունների կամ գործողությունների կատարման հետ կապված լրացուցիչ ծախսերը:

«Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին (հասանելի է հետևյալ հղումով) և «Գովազդի մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին (հասանելի է հետևյալ հղումով)

- «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» օրենքով հստակեցվում և ընդլայնվում են հիմնական հասկացությունները, սահմանվում է ապրանքի պայմանագրին համապատասխանության նոր կարգավորում, այդ թվում՝ թվային տարր պարունակող ապրանքների դեպքում:
- Ամրագրվում են վաճառողի պարտականությունները թարմացումների, սխալ տեղադրման, երաշխիքների և տեղեկատվության տրամադրման մասով, ինչպես նաև սպառողի իրավունքները՝ ոչ պատշաճ որակի կամ անհամապատասխան ապրանքի դեպքում (վերանորոգում, փոխարինում, գնի իջեցում կամ պայմանագրի լուծում): Սահմանվում են անհամապատասխանության մասին տեղեկացման, ապացուցման և թերությունների վերացման հստակ ժամկետներ: Ընդլայնվում են հեռակա և ձեռնարկության շենքից դուրս կնքվող պայմանագրերի դեպքում սպառողի պաշտպանության երաշխիքները, ներառյալ՝ պայմանագրից 14-օրյա հրաժարվելու իրավունքը, առաքման ժամկետները և ռիսկերի բաշխումը:
- «Գովազդի մասին» օրենքով սահմանվում են մոլորեցնող և համեմատական գովազդի հստակ չափորոշիչներ, ուժեղացվում են անբարեխիղճ գովազդի դեմ երաշխիքները, և ամրագրվում է, որ գովազդում ներկայացված տվյալների ճշգրտության ապացուցման պարտականությունը կրում է գովազդատուն: Համեմատական գովազդը թույլատրվում է միայն օբյեկտիվ, ստուգելի և սպառողին չմոլորեցնող պայմաններում:
- Փոփոխությունների ընդհանուր նպատակն է ուժեղացնել սպառողների իրավունքների պաշտպանությունը, ապահովել բարեխիղճ մրցակցություն և ՀՀ օրենսդրությունը լիարժեք համապատասխանեցնել ԵՄ իրավական չափանիշներին:

«Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» օրենքում և հարակից օրենքներում փոփոխություն կատարելու մասին (հասանելի է հետևյալ հղումով)

- Նախագծերով նախատեսվող փոփոխությունների նպատակն է վերացնել ծանուցումները, այլ բնույթի փաստաթղթային հրապարակումներից բխող տեղեկատվությունը որոշակի տպաքանակ ունեցող մամուլում հրապարակելու վերաբերյալ պարտադիր պահանջը՝ այն փոխարինելով www.azdarar.am հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում կատարվող և (կամ) այս կամ այն կազմակերության ինտերնետային կայքում հրապարակմամբ: Առաջարկվող կարգավորումները կհանգեցնեն հրապարակման գործընթացի արդիականացմանը և իրենց արդյունավետությունը կորցրած իրավակարգավորումների փոխարինմանը ժամանակին առավել համահունչ և կիրառելի իրավակարգավորումներով:

ՀՀ սնանկության օրենսգիրք և հարակից օրենքներում փոփոխություններ կատարելու մասին (հասանելի է <u>հետևյալ հղումով</u>)

- Նախատեսվում է ընդունել սնանկության օրենսգիրք, որը կարգավորի իրավաբանական և ֆիզիկական անձանց սնանկության և սնանկության վտանգի հետ կապված հարաբերությունները, ինչպես նաև սնանկության գործի վարման և դրա շրջանակում առանձին քաղաքացիական գործերի քննության հետ կապված և սնանկության վարույթին առնչվող այլ հարաբերություններ: Օրենսգրքում սահմանվում են մի շարք հասկացություններ, սնանկության վարույթի սկզբունքներ, վարույթի մասնակիցներին վերաբերյալ կարգավորումներ: Նախատեսվում է վարույթի ընթացքում ձևավորվող ծախսերի բավարարման կարգը և հերթերը՝ հետևյալ հաջորդականությամբ՝ 1) հարկային պարտավորություն համարվող վարչական ծախսեր. 2) կառավարչի վարձատրություն, 3) այլ վարչական ծախսեր: Հարկային պարտավորություն համարվող վարչական ծախսերը պարտապանին սնանկ ճանաչելու մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո պարտապանի գույքի իրացումից ծագող հարկային պարտավորություններն են, ինչպես նաև սնանկության վարույթում առաջացած՝ ավելացված արժեքի հարկի և ակցիզային հարկի հարկային պարտավորությունների գծով պահանջները: Օրենսգրքով կկարգավորվեն նաև կառավարչի գործունեության, որակավորման և վարձատրության վերաբերյալ հարաբերությունները՝ ինչպես պարտապանին սնանկ չճանաչելու, այնպես էլ սնանկ ճանաչելու, ֆինանսական առողջացման, պարտապանի գործունեության վերսկսման, կանխարգելիչ վերակառուցման վարույթի դեպքերում:
- Կսահմանվի նաև ոչ իրավաչափ սնանկության հասկացությունը՝ այն է կանխամտածված, անբարեխիղճ կամ ոչ ողջամիտ գործողության (անգործության) միջոցով պարտապանի անվճարունակության հատկանիշների և պարտատերերի պահանջների բավարարման անհնարինության առաջացումը, որը կարող է դրսևորվել մինչև սնանկության վարույթը կամ սնանկության վարույթի ընթացքում՝ օրենսգրքով նախատեսված դեպքերում: Ոչ իրավաչափ սնանկության վարույթի հետևանքների վերաբերյալ, նախատեսվում է, որ եթե ոչ իրավաչափ սնանկությունը վրա է հասել պարտապանի կանոնադրական կապիտալին տիրապետող կամ նրան կատարման համար պարտադիր ցուցումներ տալու կամ նրա որոշումները կանխորոշելու հնարավորություն ունեցող այլ անձանց, բացառությամբ կառավարչի, այդ թվում՝ պարտապանի հիմնադիրների, պարտապանի ղեկավարների (տնօրեն, նախագահ և այլն) մեղքով,
- ապա նշված անձինք կրում են համապարտ պատասխանատվություն պարտապանի սնանկության վարույթի ընթացքում հաստատված պահանջների, դրանց համապատասխան՝ կառավարչի վարձատրության և վարչական ծախսերի հանրագումարի չափով:
- Առանձին ենթաբաժնով կարգավորվում են նաև իրավաբանական անձի սնանկության վերաբերյալ հարաբերությունները, մասնավորապես սնանկ ճանաչելու հիմքերը, կարգը, և՛ կամավոր, և՛ հարկադրված սնանկության դիմումին ներկայացվող պահանջները, պարտապանի՝ դատարան դիմելու պարտականության դեպքերը և այլն: Նախատեսվում է նաև պարտապանի և պարտատիրոջ միջև հաշտության համաձայնություն կնքելու հնարավորություն,որը ձևակերպվում է գրավոր, ստորագրվում է կողմերի կողմից և ներկայացվում է Դատարանի հաստատմանը:
- Մանրամասն կարգավորվում են նաև պարտատերերի ժողովի և խորհրդի հետ կապված հարաբերությունները, դրանց իրավասությունները, գումարման և կազմակերպման կարգը. մասնավորապես՝ պարտատերերի ժողովը հրավիրում, կազմակերպում և անցկացնում է կառավարիչը (միաժամանակ, օրենսգրքով նախատեսվել են որոշ բացառություններ):
- Նախատեսվում է, որ պարտատերերի պահանջնե րը կարող են լինել ապահովված, որոնք ծանրաբեռնված են ապահովված իրավունքով կամ չապահովված: Նախատեսվում են չապահովված պահանջների խմբերը և հերթերը, պարտատերերի պահանջների ներկայացման կարգը, պահանջների հաշվառումը, դրանց առարկումը, պահանջներին նկատմամբ դատական վերահսկողությունը, որն իրենից ենթադրում է պահանջների օրինականության, չափի, առաջնահերթության և ապահովվածության գնահատում դատարանի կողմից:
- Առանձին ենթաբաժնով կարգավորվում է նաև ֆիզիկական անձանց սնանկությունը, դիմումին ներկայացվող պահանջները և ֆինանսական առողջացման ծրագրի վերաբերյալ հարաբերությունները:
- Նախատեսվում են նաև կարգավորումներ առանձին սուբյեկտների սնանկության վերաբերյալ, որոնք են հատուկ կարևորության կազմակերպությունները (որոնց թվում են օրինակ՝ էներգետիկայի, ջրային և հեռահաղորդակցության (էլեկտրոնային հաղորդակցության) ոլորտներում կարգավորվող գործունեություն իրականացնող անձինք) և գյուղատնտեսական կազմակերպությունները:

ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին (հասանելի է <u>հետևյալ հղումով</u>)

- Նախագծերի անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ հարկային օրենսգրքի կիրառման ընթացքում առաջացած հարցերի կանոնակարգման և հստակեցման, առանձին իրավական նորմերի վերանայման, դրանցում բովանդակային, խմբագրական փոփոխություններ կամ լրացումներ կատարելու և նոր կարգավորումներ սահմանելու անհրաժեշտությամբ:
- Վերանայվել է արտարժույթով արտահայտված գործարքների և գործառնությունների հաշվառման կանոնները, նախատեսելով հետևյալը՝
- ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման և (կամ) ծառայությունների մատուցման գործարքների մասով (բացառությամբ ներմուծման և արտահանման գործարքների) հարկման բազաների, եկամուտների և ձեռքբերման արժեքների որոշման համար հիմք ընդունել օրենսգրքով սահմանված հաշվառման մեթոդին համապատասխան դրանց համար հաշվառման ամսաթվի (ներկայումս սահմանված է հաշվարկային փաստաթղթի դուրս գրման ամսաթվի) դրությամբ ԿԲ հրապարակած միջին փոխարժեքը,
- արտարժույթի փոխանակման գործարքների մասով եկամուտների և ծախսերի հաշվարկը կատարել արտարժույթի փոխանակման ամսաթվի դրությամբ՝ ելնելով այդ օրը ձևավորված միջին փոխարժեքից,
- տրամադրված կամ ստացված կանխավճարների մասով առաջացած դեբիտորական և կրեդիտորական պարտքերի սկզբնական արժեքների որոշման համար հիմք ընդունել դրանց առաջացման ամսաթվի դրությամբ միջին փոխարժեքը,
- միաժամանակ, որպես տվյալ օրվա ԿԲ հրապարակած՝ միջին փոխարժեք հիմք է ընդունվում ԿԲ կողմից նախորդ աշխատանքային օրը հրապարակված միջին փոխարժեքը, իսկ արտարժույթի փոխանական գործարքների մասով՝ ԿԲ կողմից այդ օրը հրապարակված միջին փոխարժեքը:
- Կանոնակարգվել է ապրանքի վերադարձի դեպքում գործարքի ճշգրտման հետ կապված հարցերը և գործարքի ճշգրտման հնարավորություն է նախատեսվել ապրանքի վերադարձի այն բոլոր դեպքերի համար, երբ գործարքի առարկա հանդիսացող ապրանքը ենթակա է վերադարձման: Ներմայումս վերադարձի դեպքում գործարքի ճշգրտման հնարավորություն նախատեսված է միայն պիտանիության ժամկետ ունեցող ապրանքների համար և այն դեպքերի համար, երբ ապրանքների ընդունման պահին պարզվում է, որ ապրանքը չի համապատասխանում պայմանագրով սահմանված պայմաններին և այն ենթակա է վերադարձման,
- Կանոնակարգվել են հարկային հաշիվներից բացի այլ հաշվարկային փաստաթղթերով (այդ թվում՝ ՀԴՄ կտրոններով) ձեռքբերումների վերադարձի մասով գործարքների ճշգրտման դեպքում ԱԱՀ-ի և ակցիզային հարկի գծով պարտավորություններն արտացոլելու հարցերը՝ նախատեսելով, որ ճշգրտումները արտացոլվում են ճշգրտման ժամանակաշրջանի համար ներկայացվող միասնական հաշվարկում, բացառությամբ՝ հարկի գումարների ավելացման դեպքերի, որոնք պետք է արտացոլվեն մատակարարումների օրը ներառող հաշվետու ժամանակաշրջանի միասնական հաշվարկում:
- Վաղեմության ժամկետով (գործարքի կատարման տարվան հաջորդող 3 տարի) պայմանավորված սահմանափակումը կիրառվելու է նաև դուրս գրված հաշվարկային փաստաթղթերի չեղարկման մասով (ներկայումս այն սահմանված է և կիրառվում է դուրս գրման և ճշգրտման մասով):
- Հստակեցվել են գյուղատնտեսական արտադրանքի արտադրությամբ զբաղվող հարկ վճարողների կողմից մինչև ԱԱՀ շեմը (115 մլն դրամ) ԱԱՀ-ի պարտավորությունների կատարմանը վերաբերող հարցերը: Առաջարկվող փոփոխությամբ նախատեսվում է սահմանել, որ՝
- գյուղատնտեսական արտադրանք արտադրողներ են համարվում օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված գյուղատնտեսական արտադրանք արտադրողները,
- գյուղատնտեսական արտադրանք արտադրողները այդ արտադրանքի մատակարարման գործարքների մասով ԱԱՀ չեն հաշվարկելու և վճարելու, իսկ գյուղատնտեսական արտադրանք չհամարվող ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման և (կամ) ծառայությունների մատուցման գործարքների մասով՝ հաշվարկելու և վճարելու են ԱԱՀ:
- Փոփոխվել են ՀՀ-ում մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ կազմակերպության կողմից ՀՀ-ում իրականացված՝ գործարքների ու գործառնությունների գծով ԱԱՀ-ի հաշվարկման և վճարման պարտավորությունների կատարմանը վերաբերող դրույթները, սահմանվել է, որ այդ ռեզիդենտ կազմակերպությունը պետք է հաշվարկի ու վճարի ԱԱՀ՝ ՀՀ-ում իրականացվող գործարքների մասով, եթե գործարքի կողմը ԱԱՀ վճարող չհամարվող կազմակերպություն է (բացառությամբ՝ պետության և համանքի) և անհատ ձեռնարկատեր (գործող կարգավորումները սահմանված են այն դեպքերի համար, երբ գործարքի կողմերը շրջանառության հարկ վճարողներ կամ միկրոձեռնարկատիրության սուբյեկտներ):

- Միաժամանակ, մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ կազմակերպության կողմից ԱԱՀ-ի գծով հարկային պարտավորությունների հաշվարկման համար կիրառվելու են նույն կարգավորումները՝ հաշվետու ժամանակաշրջանի, հարկի վճարման ու հարկային հաշվարկների ներկայացման ժամկետների առումով:
- Հստակեցվել են ԱԱՀ-ով հարկման բազայի որոշման կանոնի և ԱԱՀ-ից ազատման արտոնությունների հետ կապված հարցերը՝
- պետական տուրքի մասով ԱԱՀ-ից ազատման արտոնությունը հավասարապես կիրառելի է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից բացի այլ հարկ վճարողների կողմից ևս մատուցվող ծառայությունների մասով,
- ԱԱՀ-ից ազատման արտոնություն կիրառել նաև համայնքներին նվիրատվությամբ ապրանքների մատակարարման մասով (ներկայումս ԱԱՀ-ից ազատվում է միայն պետությանը նվիրատվությունը, իսկ համայնքների նվիրատվության դեպքում ԱԱՀ-ից չի ազատվում և ՀՀ կառավարության 12.01.2018թ. N402-Ն որոշմամբ հարկման բազան 0 դրամ է):
- Վերանայվել են ԵՏՄ անդամ պետություններից ՀՀ ներմուծվող՝ ակցիզային դրոշմանիշերով դրոշմավորման ենթակա՝ ակցիզային հարկով հարկման ենթակա՝ ԵՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքների համար ակցիզային հարկի գումարները մաքսային մարմիններին վճարելու հետ կապված դրույթը և նախատեսել, որ այդ գումարները ևս պետական բյուջե պետք է վճարվեն մինչև ապրանքները ՀՀ տարածք ներմուծելու (ՀՀ պետական սահմանը հատելու) օրն ընդգրկող ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ՝ որպես հարկային մարմնին վճարվող գումարներ:
- Սահմանվում է, որ շահութահարկ վճարողի կողմից իր բաժնետոմսերի, բաժնեմասերի կամ փայաբաժինների ոչ միայն տեղաբաշխման (որը վերաբերում է բաժնետիրական ընկերություններին), այլ նաև օտարման (որը վերաբերում է մասնավորապես՝ ՍՊԸ-ներին) դեպքում տեղաբաշխման (օտարման) գնի և անվանական արժեքի դրական տարբերությունը եկամուտ չի համարվում:
- Հստակեցվել են տոկոսների մասով եկամտի հաշվեգրման կարգավորումները՝ սահմանելով հայեցողություն տոկոսների տեսքով եկամտի հաշվեգրման մասով՝ նախատեսելով, որ տոկոսների տեսքով եկամտի ստացման իրավունքը համարվում է ձեռք բերված կամ տոկոսների հաշվարկման յուրաքանչյուր օրվա դրությամբ կամ պարտքի ժամկետը լրանալու պահից:
- Վերանայվել է ինքնավար էներգաարտադրողների կողմից ներտնտեսական նպատակներով օգտագործվող էլեկտրաէներգիայի արտադրության հետ կապված ծախսերի նվազեցումը սահմանափակող դրույթը:
- Սահմանվում է, որ էլեկտրական էներգիայի բաշխման լիցենզիա ունեցող անձին մատակարարված էլեկտրական էներգիայի դիմաց հավասար փոխհոսքերի տեսքով ստացվող էլեկտրական էներգիայի սկզբնական արժեքը որոշումն է ինքնավար էներգաարտադրողի կողմից մատակարարված էլեկտրական էներգիայի արտադրության համար կատարված ծախսերի չափով:
- Հստակեցվում են արտարժույթի փոխանակման գործարքներ իրականացնելիս արտարժույթի վաճառքի կամ ձեռքբերման ամսաթվի դրությամբ ԿԲ հրապարակած՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքից տարբերվող այլ փոխարժեքի կիրառման արդյունքում ստացվող եկամուտների և ծախսերի հաշվառման կարգավորումները:
- Վերանայվել են դրոշմավորման ենթակա կաթնամթերքի գծով որակական կորուստների՝ համախառն եկամտից նվազեցման նորման՝ սահմանելով, որ նշված կորուստը համախառն եկամտից ենթակա է նվազեցման համախառն եկամտի 2%-ը չգերազանցող չափով:
- Վերանայվում են դրամարկղային մեթոդով ոչ ռեզիդենտ կազմակերպությունների, ինչպես նաև ֆիզիկական անձանց եկամուտների հաշվառման կարգավորումները, մասնավորապես՝ ֆիզիկական անձանց մասով դրամարկղային մեթոդը մոտարկելով ոչ ռեզիդենտի համար սահմանված կարգավորումներին:
- Ուժը կորցրած են ճանաչվում ենթաակցիզային ապրանքների օտարման համար օրենսգրքով սահմանված նվազագույն գների կարգավորումները:

«Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին (հասանելի է հետևյալ <u>հղումով</u>)

- Նախագծով առաջարկվում է Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահին հնարավորություն ընձեռել Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեությանն օժանդակող անձանց շնորհակալագրից, հուշանվերից եւ դրամական պարգեւատրումից բացի պարգեւատրել նաեւ մեդալով կամ կրծքանշանով:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին (հասանելի է հետևյալ <u>հղումով</u>)

- Նախատեսվում է գաղտնի քննչական գործողությունների շարքում կատարել լրացում և նախաբեսել վերահսկելի մատակարարումը և գնումը, որը ապրանքների և ծառայությունների շրջանառության վերահսկումն է՝ ապրանքներն ու ծառայությունները գնելու կամ այդպիսիք վաճառելու միջոցով:

«Էկոպարեկային ծառայության մասին» օրենքում փոփոխություն եւ լրացումներ կատարելու մասին (հասանելի է հետևյալ հղումով)

- Առաջարկվում է պետական անտառներում, անտառային հողերում եւ բնության հատուկ պահպանվող տարածքներում կենսաբազմազանության մոնիթորինգի իրականացման գործընթացին մասնակցությունը, ինչպես նաեւ ծառայության արդյունավետ իրականացումն ապահովելու նպատակով տեղեկատվության օպերատիվ ձեռք բերման եւ փոխանակման տեսանկյունից տեղական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցությունը օրենքով ամրագրել որպես էկոպարեկային ծառայողի իրավունք:

Եվրասիական տնտեսական միության եւ դրա անդամ պետությունների՝ մի կողմից, և Մոնղոլիայի՝ մյուս կողմից, միջև ժամանակավոր առեւտրային համաձայնագիրը վավերացնելու մասին (հասանելի է հետևյալ հղումով)

- Եվրասիական տնտեսական միության և դրա անդամ պետությունների՝ մի կողմից, և Մոնղոլիայի՝ մյուս կողմից, միջև ժամանակավոր առևտրային համաձայնագիրը ստորագրվել է 2025 թվականի հունիսի 27-ին: Համաձայնագրի նպատակն է ազատականացնել և պարզեցնել կողմերի միջև ապրանքների առևտուրը, աջակցել կողմերի միջև տնտեսական և առևտրային փոխգործակցությանը, ինչպես նաև խրախուսել Կողմերի միջև առևտրի ընդլայնումը և բազմազանեցումը:

«Գնումների մասին» օրենքում և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (հասանելի է հետևյալ հղումով)

- Գործող կարգավորումները չեն նախատեսում հանրային պաշտոնյաների և նրանց ընտանիքի անդամներին հետ փոխկապակցված ընկերությունների գնման գործընթացներին մասնակցելու սահմանափակումներ: Նախագծով առաջարկում է ներդնել նման սահմանափակումներ նախատեսող համակարգ՝ ըստ ազդեցության մակարդակների: Նախագծով առաջարկվում է կատարելագործել հանրային գնումների ոլորտում շահերի բախման և հակակոռուպցիոն կառուցակարգերը: Նաև, նախատեսվում է կնքվելիք պայմանագրով (նախագծով) սահմանել, որ բոլոր այն դեպքերում, երբ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի եզրակացությամբ կարձանագրվի, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը խախտել է մասնակցության արգելքը, ապա եզրակացության հիման վրա պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը:

«Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին (հասանելի է հետևյալ հղումով) և «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքում լրացում կատարելու մասին (հասանելի է հետևյալ հղումով)

- Օրենսդրական ամրագրմամբ նախատեսվում է Սահմանադրական դատարանի նախագահին, փոխնախագահին և դատավորներին վճարել նրանց կարգավիճակին և պատասխանատվությանը համապատասխան՝ դատավորի պաշտոնում աշխատանքային ստաժի համար հավելավճարներ:

«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին (հասանելի է հետևյալ հղումով)

- Վերանայվել են առողջապահական՝ ներառյալ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող ղեկավարող գործադիր մարմնի հավակնորդին ներկայացվող պահանջները, ինչը կբարձրացնի կազմակերպությունների ղեկավարման և ընդհանուր գործունեության արդյունավետությունը: Նախագծի ընդունման արդյունքում կապահովվի նաև առողջապահական կազմակերպությունների գործադիր մարմնի ղեկավարների կազմակերպության գործունեության վերաբերյալ հաշվետվողականությունը լիազոր մարմնին և իրենց պաշտոնի նշանակող և ազատող համապատասխան իրավասու մարմնին, և արդյունքում կբարձրանա առողջապահական կազմակերպությունների ղեկավարման և ընդհանուր գործունեության արդյունավետությունը:

«Խոշոր կատվազգիների հարցերով միջազգային դաշինքի վերաբերյալ» շրջանակային համաձայնագիրը վավերացնելու մասին (հասանելի է հետևյալ հղումով)

- «Խոշոր կատվազգիների հարցերով միջազգային դաշինքի հիմնադրման վերաբերյալ» շրջանակային համաձայնագրի վավերացման նպատակահարմարությունը պայմանավորված է Հայաստանի և Հնդկաստանի միջև հարաբերությունների հետագա ընդլայնման անհրաժեշտությամբ և նախատեսվում է, որ դրա վավերացումը կնպաստի երկու երկրների միջև շրջակա միջավայրի ոլորտում համագործակցության զարգացմանը:

«Մարզական մրցումների մեքենայությունների մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիան վավերացնելու մասին (հասանելի է հետևյալ հղումով)

- Կոնվենցիան միտված է կանխել արդյունքների արհեստական փոփոխումը, պահպանել մրցումների անկանխատեսելի բնույթը, ինչն առանցքային է արդար խաղի և սպորտի հեղինակության համար:

«Եվրասիական տնտեսական միության և դրա անդամ պետությունների՝ մի կողմից, և Արաբական Միացյալ Էմիրությունների՝ մյուս կողմից, միջև տնտեսական գործընկերության մասին» համաձայնագիրը վավերացնելու մասին (հասանելի է հետևյալ հղումով)

- Համաձայնագրի նպատակն է ազատականացնել և պարզեցնել Կողմերի միջև ապրանքների առևտուրը, այդ թվում՝ սակագնային և ոչ սակագնային խոչընդոտների նվազեցման միջոցով, աջակցել Կողմերի միջև տնտեսական և առևտրային փոխգործակցությանը, ինչպես նաև խրախուսել Կողմերի միջև առևտրի ընդլայնումը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում և հարակից օրենքներում լրացումներ կատարելու մասին (հասանելի է հետևյալ հղումով)

- Նախատեսվում է, որ բանկային կամ հարակից գաղտնիք կազմող փաստաթղթերի առգրավումը կարող է կատարվել նաև էլեկտրոնային եղանակով: Այդ դեպքում առգրավման որոշումը և առգրավման ենթակա փաստաթղթերը հանձնվում են էլեկտրոնային եղանակով: Էլեկտրոնային եղանակով առգրավում կատարելու դեպքում առգրավման արձանագրությանը կցվում է առգրավման կատարման փաստը հավաստող փաստաթուղթը, որը ներբեռնվում է ինքնաշխատ եղանակով:

«Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիային կից «Գենետիկական պաշարների հասանելիության և դրանց օգտագործումից ստացվող օգուտների արդար ու հավասար հիմունքներով համօգտագործման մասին» Նագոյայի արձանագրությունը վավերացնելու մասին (հասանելի է հետևյալ հղումով)

- ՄԱԿ-ի «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիայի Գենետիկական ռեսուրսներին հասանելիության և դրանց օգտագործումից բխող օգուտների արդար ու հավասար բախշման մասին Նագոյայի արձանագրությունը միտված է Կոնվենցիայի երեք հիմնական նպատակներից մեկի՝ գենետիկական ռեսուրսների օգտագործումից ստացվող օգուտների արդար և հավասար բախշման գործնական իրականացմանը:

«Նախադպրոցական կրթության մասին» օրենքում և հարակից օրենքներում լրացում և փոփոխություններ կատարելու մասին (հասանելի է հետևյալ հղումով)

- Նախագծերի ընդունման արդյունքում ոլորտային օրենքները կհամապատասխանեն «Կրթության մասին» օրենքի նոր պահանջներին: Մասնավորապես, կապահովվի նախադպրոցական կրթության հասանելիության ընդլայնման հնարավորությունը՝ փոքրաթիվ բնակավայրերում նախակրթարաններ ստեղծելու իրավական հիմքերի հստակեցմամբ և նախադպրոցական տարիքի երեխաների ընդգրկվածության ընդլայնմամբ:

Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի միջև «Երևանի մաքսային և լոգիստիկ կենտրոն» վարկային համաձայնագիրը վավերացնելու մասին (հասանելի է հետևյալ հղումով)

- Համաձայնագիրը ստորագրվել է 2025 թվականի սեպտեմբերի 19-ին: Համաձայնագրով նախատեսվում է Հայաստանի Հանրապետությանը տրամադրել 39.000.000 եվրոյի չափով վարկային միջոցներ՝ «Երևանի մաքսային և լոգիստիկ կենտրոն» ծրագրի իրականացման համար:
- Ծրագրի նպատակն է Բանկի կողմից վարկային միջոցների ներգրավմամբ՝ օժանդակել Հայաստանի Հանրապետությանը Երևանի մերձակայքում մաքսային և լոգիստիկ կենտրոն կառուցելու և համապատասխան սարքավորումներ տրամադրելու գործում, ինչպես նաև ծրագրի իրականացման նպատակով մատուցել խորհրդատվական ծառայություններ:

Ստորև ներկայացված նախագծերը ընդունվել են երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ:

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին (հասանելի է հետևյալ հղումով)

- Նախատեսվում է, որ ՀՀ Կադաստրի կոմիտեում այլևս չեն գործելու սպասարկման գրասենյակներ, փոխարենը՝ գործելու են նոր ստեղծված խորհրդատվական կենտրոններ: Հետևաբար, նախատեսվում է համապատասխան հոդվածներում կատարել փոփոխություններ՝ «սպասարկման գրասենյակ» բառերը փոխարինելով «խորհրդատվական կենտրոն» բառերով, ինչպես նաև հասկացությունների շարքում ներառել «խորհրդատվական կենտրոն» հասկացությունը:

Ռազմական գործողությունների հետևանքով ստեղծված պայմաններում և հանգամանքներում անհայտ կորած անձանց մասին օրենքի և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (հասանելի է հետևյալ հղումով)

- Նոր օրենքով կկարգավորվեն ռազմական գործողությունների հետևանքով ստեղծված պայմաններում և հանգամանքներում անհայտ կորած անձանց իրավական վիճակին առնչվող իրավահարաբերությունները:
  Մասնավորապես, սահմանվում են քննարկվող օրենքի իմաստով անհայտ կորած անձի հասկացությունը, իրավական կարգավիճակը, անհայտ կորած անձանց և նրանց ընտանիքի անդամների սոցիալական պաշտպանության, անհայտ կորած անձանց որոնման, հայտնաբերման և վերադարձման հետ կապված հարաբերությունները, անհայտ կորած անձանց, ինչպես նաև նրանց ընտանիքի անդամների իրավունքները, այդ թվում՝ անհայտ կորած անձի անհետացման պատճառների և հանգամանքների վերաբերյալ հավաստի տեղեկություններ ստանալու, սոցիալական պաշտպանության իրավունքը, իրենց նախաձեռնությամբ և լիազոր մարմնի համաձայնությամբ, լիազոր մարմնին անհայտ կորած անձանց հետախուզման գործընթացում օգնություն և աջակցություն ցուցաբերելու իրավունքը և այլն:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում հարակից օրենքներում լրացում կատարելու մասին (հասանելի է հետևյալ հղումով)

- Առաջարկվում է վերանայել դատավորների, դատախազների, քննիչների թեկնածուների ընտրության, նշանակման և առաջխաղացման գործընթացները, նախատեսել մասնավորապես բարեվարքության վերաբերյալ եզրակացությանն առնչվող նոր կարգավորումներ:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (հասանելի է հետևյալ հղումով) և «Հանրային ծառայության մասին» օրենքում լրացում կատարելու մասին (հասանելի է հետևյալ հղումով)

- Նախագծերի ընդունման արդյունքում նախատեսվելու են հետևյալ հիմնական փոփոխությունները.

1. Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովում ոչ դատավոր անդամների ձայների կշիռը բարձրացնել 3 ձայնով, հստակեցվում են հանձնաժողովի գործունեությանն ու գործառույթներին վերաբերող կարգավորումները:
2. Սահմանափակել Դատավորների ընդհանուր ժողովի հանձնաժողովների դատավոր չհանդիսացող անդամի կողմից Հայաստանի Հանրապետության ընդհանուր իրավասության, մասնագիտացված, վերաքննիչ դատարաններում և Վճռաբեկ դատարանում դատական ներկայացուցչություն իրականացումը:
3. Օրենքով սահմանված կարգով գրանցված և որոշակի ոլորտներում գործունեություն ծավալող ոչ առևտրային կազմակերպությունները հնարավորություն կունենան առաջադրելու Դատավորների ընդհանուր ժողովի հանձնաժողովի ոչ դատավոր անդամի թեկնածուներ:
4. Դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված գիտական աստիճան ունեցող հավակնորդներին և դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված՝ վերջին 10 տարվա ընթացքում մասնագիտական աշխատանքի առնվազն ութ տարվա փորձառություն ունեցող հավակնորդները կներառվեն ավելի վաղ հերթում:
5. Սահմանվում է Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի դատավոր չհանդիսացող անդամների թեկնածուների կողմից իրենց ընտրությունից առաջ Դատական դեպարտամենտ բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկ ներկայացնելու, ինչպես նաև ընտրվելու դեպքում՝ ըստ պահանջի Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով իրավիճակային հայտարարագիր ներկայացնելու պահանջներ:

ՀՀ քրեակատարողական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին (հասանելի է հետևյալ հղումով)

- Նախագծով առաջարկվում է երկարատև բժշկական օգնության և սպասարկման կարիք ունեցող դատապարտյալներին տեղափոխել այն քրեակատարողական հիմնարկ, որտեղ տեղակայված է համապատասխան կարողություններով մասնագիտացված բժշկական ստորաբաժանումը:

«Մաքսային կարգավորման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (հասանելի է հետևյալ <u>հղումով</u>), «Պետական տուրքի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին (հասանելի է հետևյալ <u>հղումով</u>)

- Էլեկտրոնային առևտրի կարգավորման նպատակով ԵՏՄ անդամ պետությունների կողմից ստորագրվել է «Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին» 2017 թվականի ապրիլի 11-ի պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին» 25.12.2023թ. արձանագրությունը, որով նախատեսվել է կանոնակարգել ԵՏՄ անդամ չհանդիսացող պետություններից էլեկտրոնային առևտրի շրջանակներում ձեռքբերված ապրանքների՝ ԵՏՄ մաքսային տարածք ներմուծման և հայտարարագրման հետ կապված հարաբերությունները:
- Էլեկտրոնային առևտրի ապրանքների հայտարարագրման նպատակով ներդրվում է էլեկտրոնային առևտրի օպերատորի ինստիտուտը, սահմանվում են օպերատորին ներկայացվող պահանջներն ու չափանիշները, օպերատորի գործունեության պայմանները:
- Օտարերկրյա էլեկտրոնային հարթակներից անձանց կողմից ձեռք բերվող ապրանքների տարանջատում այլ ապրանքներից, այդ ապրանքների հայտարարագրման պարզեցված կարգավորումներ առանձին մաքսային ընթացակարգերով:
- Էլեկտրոնային առևտրի ապրանքների մատակարարման երկու ուղղությունների առանձնացում՝
- ուղիղ մատակարարումներ (ֆիզիկական անձանց կողմից անմիջապես օտարերկրյա էլեկտրոնային հարթակներից ձեռքբերված ապրանքների ներմուծում և հայտարարագրում),
- էլեկտրոնային առևտրի օպերատորի միջոցով իրականացվող մատակարարումներ (էլեկտրոնային առևտրի օպերատորը էլեկտրոնային առևտրի ապրանքները ձևակերպում է «Մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգով, որից հետո ապրանքները ձեռք են բերվում ֆիզիկական անձանց կողմից, ապրանքները առաքվում են ֆիզիկական անձանց հասցեով, «Մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված և ֆիզիկական անձանց օտարված էլեկտրոնային առևտրի ապրանքները ձևակերպվում են «Բացթողում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով՝ մինչև ֆիզիկական անձանց կողմից այդպիսի ապրանքների ձեռքբերման ամսվան հաջորդող ամսվա 15-ը):
- Վերոնշյալ արձանագրությամբ մի շարք հարաբերությունների կարգավորումը վերապահվել է անդամ պետությունների ազգային օրենսդրությանը: Այդ նպատակով Կառավարության 11.12.2025թ. նիստում N1781-Ա որոշմամբ հավանություն է տրվել օրենքների փոփոխությունների նախագծերին:

- **«Մաքսային կարգավորման մասին» օրենքում փոփոխությունները՝**
- էլեկտրոնային առևտրի հայտարարագրի՝ մաքսային մարմնին ներկայացման ժամանակ հայտարարագրում ներառված տեղեկությունները հաստատող փաստաթղթերի ներկայացման դեպքերի սահմանում.
- էլեկտրոնային առևտրի ապրանքների՝ դրանց բացթողումից հետո առևտրային նպատակներով օգտագործման դեպքում անձանց պատասխանատվության սահմանում, առևտրային գործունեություն իրականացնող ֆիզիկական անձինք կրում են հարկային օրենսգրքի 407-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվություն,
- չպահանջված՝ էլեկտրոնային առևտրի ապրանքների՝ ԵՏՄ մաքսային տարածքից արտահանման դեպքում դրանց փոխադրման կարգի սահմանում,
- մաքսային պահեստներում գտնվող էլեկտրոնային առևտրի ապրանքների ձեռքբերումներից հետո դրանց դուրսբերման և առաքման ժամանակ մաքսային մարմնին ծանուցման կարգի սահմանում,
- ֆիզիկական անձանց իրացված և առաքված ապրանքների վերադարձի և մաքսային պահեստներում տեղակայման նպատակներով մաքսային մարմնին ծանուցման կարգի սահմանում,
- մաքսային վճարների գծով պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում մաքսային մարմինների կողմից տույժերի գանձման, ծանուցումների ուղարկման, բռնագանձման միջոցների սահմանումը,
- էլեկտրոնային առևտրի ապրանքների արժեքի որոշման ժամանակ առանձին ընթացակարգային դրույթների սահմանում:
- **«Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխությունները**
- Հաշվի առնելով այն, որ արձանագրությամբ էլեկտրոնային առևտրի ապրանքները տարանջատվել են ապրանքների այլ կատեգորիաներից, սահմանվում են մաքսային մարմինների կողմից իրականացվող գործառնությունների համար պետական տուրքի դրույքաչափեր՝
- մեկ ապրանքային հայտարարագրով հայտարարագրվող ապրանքների բացթողմանն ուղղված մաքսային գործառնությունների իրականացման համար պետական տուրքի մասին դրույթները նախատեսվում են տարածել նաև էլեկտրոնային առևտրի օպերատորի կողմից մեկ էլեկտրոնային առևտրի հայտարարագրով հայտարարագրվող ապրանքների վրա,
- մեկ ուղեվորային մաքսային հայտարարագրով հայտարարագրվող ապրանքների բացթողմանն ուղղված մաքսային գործառնությունների իրականացման համար պետական տուրքի մասին դրույթները կտարածվի նաև ֆիզիկական անձանց կողմից մեկ էլեկտրոնային առևտրի հայտարարագրով հայտարարագրվող ապրանքների վրա:

«Մաքսային կարգավորման մասին» օրենքում լրացում կատարելու մասին (հասանելի է հետևյալ հղումով)

- Նախագծի ընդունումը պայմանավորված է ՀՀ պետական սահմանի ցամաքային անցման կետերում բեռնատար տրանսպորտային միջոցների հոսքի կանոնակարգման, ՀՀ-ից մեկնման ուղղությամբ մաքսային մարմինների կողմից դրանց սպասարկման ժամանակահատվածի կրճատման, սահմանահատման գործընթացի պարզեցման, անցման կետերում կուտակումների և հերթերի բացառման, մաքսային և սահմանային այլ տեսակի հսկողության գործընթացների արդյունավետ և անխոչընդոտ իրականացման անհրաժեշտությամբ:
- Հիմք ընդունելով միջազգային պրակտիկան, նախագծով առաջարկվում է պետական սահմանի ավտոմոբիլային անցման կետերի հարևանությամբ նախատեսել վճարովի կայանատեղիների կազմակերպման գործունեություն, որի շրջանակներում կգործի հերթերի կառավարման համապատասխան էլեկտրոնային համակարգ՝ բեռնատար տրանսպորտային միջոցների շարժի հաշվառման, հերթագրման, անցման կետ մուտք գործելու թույլտվության տրամադրմանն ուղղված՝ անհրաժեշտ տեղեկատվության փոխանակման նպատակներով:
- Նշված գործընթացների կազմակերպմամբ նախատեսվում է, որ անցման կետի տարածքում չեն առաջանա հերթեր և կուտակումներ՝ նախապես բեռնատար տրանսպորտային միջոցի և դրանցով փոխադրվող բեռների վերաբերյալ տեղեկությունների առկայության և անհրաժեշտ հսկողական գործընթացների նախանշման արդյունքում: Գործընթացը ենթադրում է, որ բեռնատարը նախ կայանում է այդ հատուկ տարածքում և գրանցվում էլեկտրոնային հերթում, ինչից հետո վարորդը ստանում է հստակ թույլտվություն՝ սահմանային անցման կետ մուտք գործելու համար միայն այն ժամանակ, երբ մաքսային գոտին իրականում պատրաստ է սպասարկմանը: Սա թույլ է տալիս մաքսային մարմիններին նախապես ստանալ բեռի և մեքենայի տվյալները, իրականացնել ռիսկերի գնահատում և կրճատել բուն սահմանահատման ժամանակահատվածը:

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին (հասանելի է հետևյալ հղումով)

- Օրենքի նախագծով նախատեսվում է հստակեցնել զինծառայողների ատեստավորման գործընթացը, պարտադիր զինվորական ծառայությունից պայմանագրային զինվորական ծառայության ընդունված զինծառայողների հետագա պայմանագրային զինվորական ծառայության կազմակերպման հետ կապված հարաբերությունները:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (հասանելի է հետևյալ հղումով)

- Նախատեսվում է ամրագրել վերաքննիչ բողոքները գրավոր ընթացակարգով քննելու ընդհանուր օրենսդրական կանխավարկած՝ սահմանելով այդ մասին վերաքննիչ դատարանի կողմից որոշում կայացնելու պահը և վերաքննիչ բողոքարկման ընթացքում ապացույցներ հետազոտելու միջնորդություն և վերաքննիչ բողոքի քննության ընթացքում բողոքի սահմաններից ի շահ մեղադրյալի դուրս գալու դեպքերում բանավոր ընթացակարգով բողոքների քննության առանձնահատկությունները:

Կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի մասին օրենքի և հարակից օրենքներում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին (հասանելի է հետևյալ հղումով)

- Նախատեսվում է օրենսդրական մակարդակում կարգավորել ՀՀ տարածքում տնային և թափառող, ծառայողական, ցուցադրման, սպորտային կամ ժամանցային միջոցառումների համար օգտագործվող կենդանիների հետ կապված հարաբերությունները: Մանրամասն սահմանվում են կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի սկզբունքները, կենդանիների նկատմամբ արգելված գործողությունները, կենդանիների բուծման, ձեռնարկատիրական նպատակով կենդանիների վաճառքի, կացարաններում կենդանիների պահման և խնամքի պահանջները:

ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին (հասանելի է հետևյալ հղումով)

- Առաջարկվում է հստակեցնել ՀՀ քրեական օրենսգրքի ապօրինի հարստանալու և հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից հայտարարագրում կեղծ տվյալներ ներկայացնելը, հայտարարագրման ենթակա տվյալները թաքցնելը կամ հայտարարագիր չներկայացնելու հոդվածներով նախատեսված արարքների սուբյեկտների շրջանակը: Մասնավորապես, յուրաքանչյուր տեսակի հայտարարագիր չներկայացնելու կամ դրանում կեղծ տվյալներ ներկայացնելու, կամ ներկայացված տվյալը խեղաթյուրելու համար օրենսդիրը սահմանել է առանձին քրեական պատասխանատվություն: Հետևաբար, հստակեցվել է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 444-րդ հոդվածով պատասխանատվությունը նախատեսված է ոչ թե առհասարակ ՀՀ օրենսդրությամբ սահմանված բոլոր, այլ կոնկրետ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով ներկայացվող հայտարարագրերի չներկայացնելու, դրանում կեղծ տվյալ ներկայացնելու կամ հայտարարագրման ենթակա տվյալը թաքցնելու համար:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (հասանելի է հետևյալ հղումով) և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին (հասանելի է հետևյալ հղումով)

- Առաջարկվում է Վարչական դատարանի գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերաքննիչ բողոքների քննությունն իրականացնել գրավոր ընթացակարգով: Ամրագրելով վերաքննիչ բողոքների քննությունը գրավոր ընթացակարգով իրականացնելու ընդհանուր օրենսդրական կանխավարկած՝ միաժամանակ, սահմանվում են որոշ բացառություններ:
- Մասնավորապես, նախագծով սահմանվում է, որ եթե կողմի միջնորդությամբ մինչև վերաքննիչ բողոքի պատասխան ներկայացնելու վերջնաժամկետի ավարտից հետո 1-ամսյա ժամկետում, իսկ դատարանի սեփական նախաձեռնությամբ բողոքի քննության ցանկացած փուլում՝ դատարանը գա եզրահանգման, որ վերաքննիչ բողոքի քննության արդյունավետության նպատակով այն անհրաժեշտ է իրականացնել դատական նիստում, ապա որոշում է կայացնում վերաքննիչ բողոքի քննությունը դատական նիստում անցկացնելու մասին, ծանուցելով այդ մասին դատավարության մասնակիցներին:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ (հասանելի է հետևյալ հղումով) կատարելու մասին և Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին (հասանելի է հետևյալ հղումով)

- Կսահմանվի դատավարական իրավունքների չարաշահման անթույլատրելիությունը՝ որպես վարչական դատավարության սկզբունք:
- Որոշ փոփոխություններ են նախատեսվում նաև հայցադիմումը վերադարձնելու և կրկին ներկայացնելու կարգավորումներում, ինչպես նաև գործերը միացնելու վարույթում, մասնավորապես՝ փոփոխությունների արդյունքում վարչական գործերի վարումը դառնում է առավելապես էլեկտրոնային, վերացվում են նախկինում եղած որոշ բացառություններ, և միաժամանակ հստակեցվում են այն դեպքերը, երբ համակարգից դուրս ձևավորված նյութերը կարող են ներառվել գործի կազմում:
- Փոփոխությունները վերաբերում են նաև Համակարգը չօգտագործող անձին դատավարական փաստաթղթերի ուղարկման փաստի ապացուցմանը. այլևս հնարավոր կլինի կցել ոչ միայն սկանավորված տարբերակով, այլև ուղղակի ապացույցը ներկայացնելով:
- Սահմանվում են գործերի միացման ավելի մանրամասն կանոններ:
- Լրացվում է նոր կարգավորում, համաձայն որի՝ եթե տվյալ գործի համար օրենսգրքով նախատեսված են քննության հատուկ ժամկետներ, ապա ծանուցագիրը համարվում է ստացված ոչ թե երեք աշխատանքային օր անց (ըստ ընդհանուր ժամկետի), այլ արդեն հաջորդ օրը՝ այն պահից հետո, երբ այն դարձել է հասանելի Համակարգում:
- Այսուհետ բավարար կլինի, որ կա՛մ պետական տուրքը վճարված լինի Համակարգի միջոցով, կա՛մ դատարանը կարողանա հավաստիանալ վճարման կատարված լինելու փաստին (անկախ նրանից՝ վճարումը կատարվել է Համակարգով, թե ոչ):
- Սահմանվում է, որ դատարանը հայցվորին վերադարձնում է միայն այն փաստաթղթերը, որոնցում առկա են սխալներ ամբողջ հայցադիմումն ու կից փաստաթղթերը վերադարձնելու փոխարեն: Նախատեսվում է, որ եթե վերադարձման որոշումը բողոքարկվել է, բայց հայցադիմումը կրկին ներկայացվել է, դատարանը դրա ընդունման հարցը կլուծի միայն բողոքարկման արդյունքից հետո: Պարտադիր է դառնում, որ կրկին ներկայացվող հայցադիմումին կցվի դիմում՝ սխալները վերացված լինելու մասին, հակառակ դեպքում այն կդիտարկվի որպես նոր հայցադիմում:
- Նախկինում բավարար էր, որ առկա լինի հիմնավոր կասկած, թե վարչական ակտի կատարումը կարող է հայցվորին պատճառել զգալի վնաս կամ անհնար դարձնել նրա իրավունքների պաշտպանությունը, ապա այժմ ավելացվում է ևս մեկ կարևոր պայման: Մասնավորապես, միջնորդությունը կբավարարվի միայն այն դեպքում, եթե վարչական ակտի կասեցումը չի խախտում այնպիսի հանրային շահ, որը տվյալ իրավիճակում գերակա է հայցվորի շահի նկատմամբ:

ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (հասանելի է հետևյալ հղումով)

- Պատգամավորական նախաձեռնությամբ ԱԺ քննարկմանը ներկայացված նախագծով նախատեսվում է սահմանել, որ բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման դեպքում ՀԴՄ կտրոնի վրա տպագրվում է նաև յուրաքանչյուր մատուցված ծառայության համար էլեկտրոնային առողջապահության համակարգի կողմից գեներացված՝ համապատասխան բժշկական ծառայության անհատականացված նույնականացման ծածկագիրը և ծառայությունը ստացած քաղաքացու ՀԾՀ-ն:

«Առևտրի և ծառայությունների մասին» օրենքում և հարակից օրենքներում փոփոխություն և լրացում կատարելու մասին (հասանելի է հետևյալ հղումով)

- «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքում սահմանվում է «մեկանգամյա օգտագործման պլաստիկ արտադրանքի» նոր հասկացությունը և փաստացի արգելվում են գրեթե բոլոր պլաստիկ տոպրակները՝ բացառությամբ կշռափաթեթավորման համար նախատեսված պարկերի և երկրորդային հումքից արտադրված աղբի պարկերի: Արգելքը վերաբերելու է ոչ միայն վաճառքին, այլև նման արտադրանքի առկայությանը կամ ցանկացած ձևով օտարմանը, այդ թվում՝ անվճար տրամադրմանը: Սահմանափակումը տարածվում է նաև մեկանգամյա օգտագործման պլաստիկ սպասքի ու տարաների որոշ տեսակների վրա, ինչպիսիք են ափսեները, բաժակները, խառնելու ձողիկները և սննդի տարաները՝ որոշ բացառություններով: Այս արգելքների մի մասը ուժի մեջ կմտնի 2027 թվականի հունվարի 1-ից:
- Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում ներմուծվում է նոր կարգավորում, որով թիրախային խմբի ապրանքների առկայությունը կամ օտարումը դառնում է առանձին իրավախախտում: Պաշտոնատար անձանց նկատմամբ սահմանվում են տուգանքներ նվազագույն աշխատավարձի 100-ապատիկից մինչև 150-ապատիկ չափով, իսկ առաջին խախտման դեպքում կիրառվում է նախազգուշացում: Այս խախտումների գործերով լիազոր մարմին է դառնում նաև Շուկայի վերահսկողության տեսչական մարմինը:
- «Շուկայի վերահսկողության մասին» օրենքով սահմանվուկմ է «դիտարկումը» որպես արագ և անսպասելի վերահսկողական գործիք: Շուկայի վերահսկողության տեսչական մարմինն այն կարող է իրականացնել առանց նախնական ծանուցման՝ մինչև 5 աշխատանքային օր տևողությամբ՝ արձանագրությամբ, բացատրություններով ու կարգադրագրով: Դիտարկմամբ վերահսկողությունն իրականացվում է երկու հիմնական ոլորտներում՝ մեկանգամյա օգտագործման պլաստիկի արգելքներ և ծխախոտային արտադրատեսակների ու դրանց փոխարինիչների առևտրի, փաթեթավորման, գովազդի կամ հովանավորության ու վաճառքի սահմանափակումներ:
- Բացի այդ, «Շուկայի վերահսկողության մասին» օրենքի կարգավորման շրջանակներում է ներառվում նաև զբոսաշրջությունը:

ՀՀ հողային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին (հասանելի է հետևյալ հղումով)

- Նախատեսվում է, որ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված քաղաքաշինական և հողաշինարարական փաստաթղթերով նախատեսված հողամասերը՝ բացառապես նպատակային կամ գործառնական նշանակության (հողատեսքի) փոփոխմամբ պայմանավորված 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկից դուրս գալու դեպքում, կարող են օտարվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, առանց նախկինում պետական սեփականություն հանդիսացող հողամասերն անհատույց սեփականության իրավունքով համայնքին փոխանցելու մասին Կառավարության համապատասխան որոշումներում փոփոխություն կատարելու՝ համայնքի ղեկավարի կողմից տրված՝ տվյալ հողամասը սույն հոդվածով սահմանված հողամասերի ցանկում այլևս ընդգրկված չլինելու վերաբերյալ տեղեկանքի հիման վրա:

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին (հասանելի է հետևյալ հղումով) և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին (հասանելի է հետևյալ հղումով)

- Նախատեսվում է, որ ավագանու անդամը հրաժարականի մասին իր դիմումը կարող է հետ վերցնել այն ներկայացնելու օրվանից հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում՝ գրավոր դիմում ներկայացնելով: Այդ դեպքում ավագանու անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու գործընթացը չեղարկվում է:
- Նախատեսվում է նաև, որ ավագանու անդամի կողմից եռօրյա ժամկետում հրաժարականի դիմումը հետ չվերցնելու դեպքում համապատասխան հիմնավորող փաստաթղթերի հիման վրա համայնքի ղեկավարը կամ համայնքի ղեկավարի պաշտոնակատարը կամ աշխատակազմի քարտուղարը կազմում են ավագանու անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին արձանագրություն և 7 աշխատանքային օրվա ժամկետում ուղարկում ընտրատարածքային ընտրական հանձնաժողով:

ՀՀ հողային օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին (հասանելի է հետևյալ հղումով)

- Նախատեսվում է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին) առանց մրցույթի, անհատույց (մշտական) պետության և համայնքների սեփականության հողերի անհատույց սեփականության իրավունքով տրամադրելու փոխարեն տրամադրել անհատույց օգտագործման իրավունքով:

ՀՀ քրեական օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին (հասանելի է հետևյալ հղումով)

- Նախատեսվում է, որ պատժի նշանակման հետաձգման դեպքում անչափահասների և մինչև 21 տարեկանների համար պետք է կիրառվեն իրենց համար օրենքով նախատեսված կրճատված վաղեմության ժամկետները, այլ ոչ թե ընդհանուր սահմանված ժամկետները:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին (հասանելի է հետևյալ հղումով) և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին (հասանելի է հետևյալ հղումով)

- Նախագծով առաջարկվող փոփոխություններով ու լրացումներով առաջարկվում է դատարաններում սահմանել քաղաքացիական և վարչական գործերի քննության հստակ ճամսյա ժամկետ, սակայն կպահպանվի ժամկետների երկարաձգման ինստիտուտը՝ միայն պատճառաբանված դատական ակտով՝ քաղաքացիական դատավարությունում եռամսյա, իսկ վարչական դատավարությունում ճամսյա ժամկետներով:
- Միաժամանակ կսահմանվեն նաև սահմանափակումներ, օրինակ՝ սնանկության, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման և այլ վարույթներով, որոնք ունեն առանձնահատկություններ:
- Նախատեսվում է նաև ուժը կորցրած ճանաչել այն դրույթը, որը հնարավորություն է տալիս դատարանին նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայման բողոքը մերժել, եթե ՀՀ միջազգային պայմանագրերով վավերացրած միջազգային պայմանագրի հիման վրա գործող միջազգային դատարանի՝ ուժի մեջ մտած վճռով հիմնավորվել է անձի իրավունքի խախտման փաստը:
- Նախատեսվում է նաև, որ եթե ՀՀ միջազգային պայմանագրերով վավերացրած միջազգային պայմանագրի հիման վրա գործող միջազգային դատարանի՝ ուժի մեջ մտած վճռով հիմնավորվել է անձի իրավունքի խախտման փաստը, ապա քրեական դատավարության կարգով բացառիկ բողոքարկման իրավունքը չի կարող սահմանափակվել ելքի վրա ազդեցություն չունենալու հիմքով:

«Հանրային ծառայության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին (հասանելի է հետևյալ հղումով) և «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին (հասանելի է հետևյալ հղումով)

- Փաթեթով նախատեսվում է, որ վարչապետի, նախարարների և փոխվարչապետների, վերջիններիս խորհրդականների ինչպես նաև նախարարների տեղակալների կողմից պաշտոնի ստանձնման հայտարարագրերը ներկայացնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովն
- իրականացնի բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրություն, որի արդյունքում կտրամադրվի բարեվարքության ռիսկերի վերաբերյալ խորհրդատվական եզրակացություն: Ուսումնասիրությունը ներառում է վարչապետի, փոխվարչապետների, նախարարների, վերջիններիս խորհրդականների (ներառյալ՝ հասարակական հիմունքներով նշանակված խորհրդականների համար), նախարարների տեղակալների, ինչպես նաև նրանց ընտանիքի անդամների պաշտոնեական պարտականությունների ստանձնման հայտարարագրերի վերլուծություն՝ համադրված, առկայության դեպքում, նույն անձանց նախորդ հայտարարագրերի տվյալների հետ:
- Փաթեթով առաջարկվում է կարգավորել նաև այն իրավիճակները, երբ համապատասխան պաշտոնատար անձինք օրենքով սահմանված կարգով ազատված են պաշտոնեական պարտականությունների ստանձնման հայտարարագրեր ներկայացնելու պարտականությունից: Նման դեպքերում նախագծերով առաջարկվում է սահմանել, որ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրությունը իրականացվում է նախկինում տրված հայտարարագրերի հիման վրա:

«Առևտրաարդյունաբերական պալատների մասին» օրենքում և հարակից օրենքներում փոփոխություն կատարելու մասին (հասանելի է հետևյալ հղումով)

- Փաթեթով առաջարկվում է փոփոխել ապրանքի ծագման հավաստագրերի տրամադրման կարգը՝ գործընթացը տեղափոխելով պետական կարգավորման դաշտ: Մասնավորապես՝

1. Ապրանքի ծագման հավաստագրերի տրամադրման գործառույթը Առևտրաարդյունաբերական պալատից փոխանցվում է Էկոնոմիկայի նախարարությանը,
2. Ապրանքի ծագման երկրի որոշման փորձաքննությունը սահմանվում է որպես ծանուցման ենթակա գործունեության տեսակ,
3. Հավաստագրերի տրամադրման համար կգանձվի պետական տուրք:

«Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին (հասանելի է հետևյալ հղումով)

- Նախատեսվող փոփոխություններով առաջարկվում է որպես ավտոտրանսպորտային միջոց սահմանել նաև մոպեդները, տրիցիկլները և քվադրիցիկլները, ինչպես նաև համալրվում է պարտադիր ապահովագրման ոչ ենթակա տրանսպորտային միջոցներից բխող պատասխանատվությունը: Մասնավորապես պարտադիր ապահովագրման ենթակա չի լինի այն ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվությունը, որոնց շարժիչի առավելագույն ծավալը և զարգացած առավելագույն արագությունը կամ շարժիչի առավելագույն հզորությունը և զարգացած առավելագույն արագությունը չեն գերազանցում ՀՀ կառավարության սահմանած կարգով պետական գրանցման ենթակա լինելու համար նախատեսված սահմանաչափը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին (հասանելի է հետևյալ հղումով), «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին (հասանելի է հետևյալ հղումով) և «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին (հասանելի է հետևյալ հղումով)

- ՀՀ քաղաքացիական օրենսգրքում նախատեսվում են փոփոխություններ՝ ապահովվելու բազմաբնակարան շենքից բնակարան գնող սեփականատերերի իրավունքները, մասնավորապես՝ Նախագծերով առաջարկվում է շենքի տակ գտնվող հողամասի սեփականության իրավունքը վիճարկելու դեպքերում մինչև վեճի լուծումը հողամասի և ընդհանուր օգտագործման տարածքների համապատասխան բաժնային մասի նկատմամբ օրենքի ուժով երաշխավորել գնորդների գույքային իրավունքները:
- Փոփոխություններով սահմանվում է, որ եթե առկա է դատական գործ, որտեղ պետությունը կամ համայնքը վիճարկում է բազմաբնակարան շենքի տակ գտնվող հողամասի սեփականության իրավունքը, այնուամենայնիվ բնակարանի կամ ոչ բնակելի տարածքի գնորդը կարող է ձեռք բերել իր բնակարանի սեփականության իրավունքը:
- Դատական գործի ընթացքում Կառավարությունը կարող է սահմանել հողամասի հատուկ սխեմա, որի շրջանակում սեփականատերը, կառուցապատողը, գրավառուն և այլ իրավունք ունեցող անձինք կարող են ամբողջ ծավալով իրականացնել իրենց իրավունքները, հնարավոր է ստանալ քաղաքաշինական փաստաթղթեր, բնակարանների գնորդներին կարող է փոխանցվել ընդհանուր հողամասի բաժնային սեփականության իրավունքը: Եթե մինչև սխեմայի սահմանումը գնորդն արդեն ուներ հողամասի օգտագործման իրավունք, ապա սխեմա սահմանելուց հետո այդ հողամասի նկատմամբ նրան օրենքի ուժով փոխանցվում է սեփականության իրավունք (ընդհանուր բաժնային): Եթե դատական գործի ավարտին հողամասի սեփականության սուբյեկտը չի փոխվում, ապա բնակարանի սեփականատիրոջը օրենքի ուժով փոխանցվում է հողամասի համապատասխան բաժնի սեփականության իրավունքը: Եթե այնուամենայնիվ դատական գործի ավարտին հողամասը հանձնվում է պետության կամ համայնքի սեփականությանը, ապա Կառավարության սահմանած սխեմայի շրջանակում շենքի պահպանման համար անհրաժեշտ հողամասի սեփականության իրավունքը օրենքի ուժով փոխանցվում է բնակարանների սեփականատերերին՝ ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով, սակայն պահպանվում են հողամասի նկատմամբ մինչ դատական ակտը գրանցված իրավունքները:
- Փոփոխություններով նախատեսվում է նաև, որ դատական գործի առկայությունը հողամասի վիճարկման վերաբերյալ արգելք չի հանդիսանում կառուցվող շենքից բնակարան գնելու իրավունքի պայմանագիր կնքելու և կառուցված շենքում սեփականության փոխանցման ակտ կնքելու համար: Սակայն այսպիսի պայմաններում գնորդը պետք է տեղեկացված լինի, որ հողամասի վերաբերյալ առկա է դատական գործ՝ այդպիսի դրույթ ներառելու կամ պայմանագրի պայմաններում, կամ փոխանցման ակտում:
- Միաժամանակ, նախատեսվում են համապատասխան փոփոխություններ հարակից օրենքներում, ինչպիսիք են՝ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքը և «Բազմաբնակարան շենքերի կառավարման մասին» օրենքը:

E-DRAFT ՀԱՐԹԱԿՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԴՐՎԱԾ ՆԱԽԱԳԾԵՐ

«Խաղային գործունեության կարգավորման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին (հասանելի է հետևյալ <u>հղումով</u>)

- Առաջարկվում է Օրենքում կատարել համապատասխան լրացումներ՝ սահմանելով կանոնադրական կապիտալի նվազագույն չափ՝ ինտերնետ շահումով խաղի կամ վիճակախաղի, կամ բուքմեյքերային գործունեության կազմակերպչի համար՝ պետական տուրքի կրկնապատիկի չափով, իսկ շահումով խաղի կազմակերպչի համար՝ պետական տուրքի եռապատիկի չափով, բայց ոչ ավելի քան 1 միլիարդ ՀՀ դրամը:
- Ինչպես նաև սահմանվում է, որ օրենքով սահմանված կանոնադրական կապիտալը չի կարող նվազեցվել և պետք է պահպանվի օրենքով սահմանված համապատասխան լիցենզիայի գործողության ամբողջ ընթացքում:
- Միաժամանակ առաջարկվում է գործող լիցենզավորված կազմակերպիչների համար սահմանել անցումային շրջան՝ աստիճանական համապատասխանեցում կանոնադրական կապիտալի նվազագույն շեմի պահանջներին, սահմանելով ժամկետ՝ «Խաղային գործունեության կարգավորման մասին» օրենքի գործողության մեջ դրվելու օրվանից հետո՝ 6-ամսյա ժամկետ: Նոր լիցենզիա ստացող կազմակերպությունների համար՝ կիրառում «Խաղային գործունեության կարգավորման մասին» օրենքի գործողության մեջ դրվելու օրվանից:

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի հոկտեմբերի 30-ի N 1518-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ (հասանելի է հետևյալ <u>հղումով</u>)

- Նախատեսվում է բացառությունների ցանկից հանել ԱՏԳ ԱԱ 8549 ծածկագրին դասվող օգտագործված կամ թափոն ապրանքները՝ հաշվի առնելով, որ դրանք ներմուծվում են վերամշակման, ապա արտահանվում նույն ծածկագրով:
- Միաժամանակ, արտահանման ժամանակավոր արգելքի մեջ առաջարկվում է ներառել ԱՏԳ ԱԱ 7402 ծածկագրի պղնձե անոդները՝ որպես վերամշակման շղթայի կարևոր օղակ: Ձուգահեռաբար նախաձեռնված օրենսդրական փոփոխությամբ նախատեսվում է դրանց արտահանման համար սահմանել բարձր պետական տուրք, ինչի պայմաններում տվյալ արգելքը կրում է ժամանակավոր բնույթ՝ նպատակ ունենալով կանխել արտադրական շղթայի խզումը մինչև փոփոխությունների ուժի մեջ մտնելը:
- Բացի այդ, առաջարկվում է արգելքից բացառություն սահմանել ԱՏԳ ԱԱ 7307 դասակարգչին պատկանող չօգտագործված ապրանքների համար՝ դրանց առանձնահատկություններից ելնելով:
- Նախատեսվում է նաև ԱՏԳ ԱԱ 7402 ծածկագրին դասվող պղնձե անոդների արտահանման համար սահմանել պետական տուրք՝ յուրաքանչյուր տոննայի համար բազային տուրքի 400-ապատիկի չափով, ինչով էլ պայմանավորված՝ դրանց արտահանման ժամանակավոր արգելքը կրում է անցումային բնույթ:

«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ (հասանելի է հետևյալ <u>հղումով</u>)

- Նախագծով առաջարկվում է վերանայել ակցիզային հարկով հարկվող ապրանքների դրույքաչափերը՝ դրանք որոշակիորեն ինդեքսավորելով (տարեկան 3%)՝ գների աճով պայմանավորված:
- Ծխախոտային արտադրանքի մասով նախատեսվում է տարեկան 7% բարձրացում, տաքացվող ծխախոտի՝ 30%, էլեկտրոնային ծխախոտի՝ առաջին տարում 100%, ապա՝ 25% և 20%, իսկ նարգիլեի ծխախոտի՝ առաջին տարում 40%, ապա՝ տարեկան 30%: Միաժամանակ, ԱՏԳ ԱԱ 2404 91 000 9 ծածկագրին դասվող արտադրանքը ենթակա է ակցիզային հարկման՝ առաջին տարում 2,800 դրամ դրույքաչափով և հաջորդ տարիներին՝ տարեկան 30% աճով:
- Նախագծով առաջարկվում է նաև մրգային օղիների ակցիզային հարկը նվազեցնել 33%-ով՝ խթանելով ոլորտի զարգացումը, իսկ կոնյակի համար սահմանել միասնական դրույքաչափ՝ 4000 դրամ՝ 1 լիտր (100%-անոց սպիրտի վերահաշվարկով)՝ անկախ տարիքից:
- Բացի այդ, առաջարկվում է ուժը կորցրած ճանաչել ակցիզային հարկի գումարների փոխհատուցման գործող կարգավորումը՝ նախատեսելով անհրաժեշտության դեպքում տնտեսավարողներին աջակցություն տրամադրել բյուջետային գործիքներով:

«Խաղային գործունեության կարգավորման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Գովազդի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծեր (հասանելի է հետևյալ հղումով)

- Ներկայումս թվային տեխնոլոգիաների զարգացմանը զուգահեռ Հայաստանի տարածքում հեշտությամբ հասանելի են դառնում չլիցենզավորված օտարերկրյա խաղային կայքերն ու դրանց գովազդը, ինչը ստեղծում է անհավասար մրցակցային պայմաններ օրինական դաշտում գործող ընկերությունների համար:
- Նախագծով առաջարկվում է ներդնել արգելափակման ավելի պարզ և արագ մեխանիզմ, որի դեպքում վերահսկող մարմնի կողմից հաստատված ցանկի հիման վրա ինտերնետ մատակարարող օպերատորները անմիջապես կսահմանափակեն այդ կայքերի հասանելիությունը:
- Բացի այդ, կարևոր փոփոխություն է նախատեսվում նաև ֆինանսական ոլորտում, որտեղ Կենտրոնական բանկը միջոցներ կձեռնարկի արգելափակված կայքերի օգտին կատարվող դրամական գործարքները սահմանափակելու համար:
- Օրենսդրական փոփոխությունները նաև արգելում են չլիցենզավորված խաղային կազմակերպությունների և դրանց ապրանքային նշանների թիրախավորված գովազդը Հայաստանի տարածքում գտնվող օգտատերերի համար: Այս ամենը միտված է ոչ թե օրինական բիզնեսի սահմանափակմանը, այլ լիցենզավորված շուկայի պաշտպանությանը, պետական բյուջեի եկամուտների ապահովմանը և ֆինանսական հոսքերի թափանցիկության բարձրացմանը:

««Կատարողական վարույթի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծեր (հասանելի է հետևյալ հղումով)

- Նախագծով առաջարկվող գլխավոր փոփոխությունն այն է, որ արգելադրված գույքի վաճառքի հիմքում պետք է դրվի ոչ թե կադաստրային, այլ փորձաքննությամբ որոշված շուկայական արժեքը: Սա թույլ կտա ապահովել գույքի իրացումն արդար գնով և կպաշտպանի կողմերի օրինական շահերը: Բացի այդ, փոփոխություններ են նախատեսվում նաև հարկադիր աճուրդների գործընթացում:
- Ուստի, առաջարկվում է 20-րդ չկայացած աճուրդը սահմանել որպես վերջնական շեմ, որից հետո գույքի մեկնարկային գինն այլևս չի նվազեցվի:
- Առանձնահատուկ կարևորություն ունի նաև սոցիալական պաշտպանվածության բաղադրիչը, որը վերաբերում է ֆիզիկական անձանց պատկանող միակ բնակարանի իրացմանը: Նախագծով սահմանվում է, որ եթե աճուրդի մեկնարկային գինը հասնում է Կառավարության կողմից սահմանված նվազագույն շեմին, ապա հետագա փուլերում գինն այլևս չի կարող նվազել: Այս համալիր փոփոխությունների արդյունքում ակնկալվում է կրճատել կատարողական վարույթների ժամկետները, բարձրացնել պետական ռեսուրսների կառավարման արդյունավետությունը և ապահովել օրենքի միասնական ու ճիշտ կիրառումը ողջ երկրում:

Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների փոխադրողների կողմից Հայաստանի Հանրապետության տարածքում կաբոտաժային փոխադրումներ իրականացնելու պահանջները հաստատելու մասին (հասանելի է հետևյալ հղումով)

- Ըստ նախատեսվող փոփոխության՝ ԵԱՏՄ այլ պետության փոխադրողը հնարավորություն կստանա իրականացնել մինչև երեք հաջորդական կաբոտաժային փոխադրում այն բանից հետո, երբ կավարտի իր միջազգային ուղերթը դեպի Հայաստան: Այս գործողությունների համար սահմանվում է յոթ օրացուցային օր ժամկետ, իսկ փոխադրողը պարտավոր է նախապես էլեկտրոնային եղանակով տեղեկացնել պատկան տեսչական մարմնին,: Այս բարեփոխման արդյունքում ակնկալվում է զգալիորեն կրճատել բեռնատարների դատարկ վազքը և նվազեցնել փոխադրման ծախսերը՝ միաժամանակ բարձրացնելով ավտոմոբիլային տրանսպորտի օգտագործման արդյունավետությունը: